№ 62 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 22

1906

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 22 № 62

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՋԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

1) «Որբիկների արցունքները»	30 կ.
2) «Երկու պահլաւան», (Սասունի հիմնադիրները)	25 կ.
3) «Պստիկ Մհեր»	25 կ.
4) «Սասունցի Դաւիթ», I հ. 40 կ. II հ. 40 կ. նոյնը մի գրքում.	80 կ.
5) «Զգացմունք»	40 կ.
6) «Հենրիխ Պեստալոցցի» (մանկավարժական).	30 կ.

Այս գրքերի վաճառման արդիւնքի 20% յատկացվելու է դժբաղդացած կոզէնցիների օգտին։ Դիմել Կենտրօնական, Գուտտէնբէրգ, Թառայեան և Զաքարեան գրավաճառներին, իսկ հեղինակին դիմողները կըստանան 30% զեղջ, կուղարկվի կանխիկ, նաև վերադիր վճարով։ հասցէն՝ Шулаверъ, Григорію Баласанянцъ. (առ) 9—10

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼ“

Պատիւ ունիմ յայտնելու յարգելի հասարակութեանը, որ այս տարվայ մարտի 1-ից Պեսկօվսկի փողոցում, Չիկօվանիի տանը № 15 (նախկին «Թաւրիզ» համարներ)

ԲԱՑՎԱԾ Է ՀԻՒՐԱՆՈՑ

համարներով. ունի մաքուր բուֆէտ և խոհանոց։ Համարները 50 կոպ. և աւելի։

2—5 Յարգանօք Աբէթ Ղայրիմանեանց և Միսակ Սարգսեանց

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը խնդրում է կառավարչական և դասակարգային Թիֆլիսի և Թիֆլիսի գաւառի հիմնարկութիւններին, որոնք դեռ չեն ուղարկել Թիֆլիսի քաղաքային ընտրողների համաժողովի ծառայողների ցուցակը, ուղարկել այդ ցուցակները որքան կարելի է շուտ քաղաքային վարչութեան։

(առ.) 1—1

Մարտի 24, 25 և 26-ին աղքատ երեխաների խնամողական ընկերութիւնը Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում սարքելու է՝

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՎԱՃԱՌՈՒՄ

вербный базаръ

1. Զատկական ձուաներ (ահագին քանակութեամբ) հատը 5 կոպէկից սկսած մինչև 7 ռուբլի։
2. Ուրալից բերված արճաճային կաբինետային առարկաներ։
3. Տան կահ-կարասիքներ (Կուզնեցօվի)։
4. Հետաքրքիր խաղալիքներ և կուկլաներ։
5. Փայտի և կաշւի վրա նկարչութիւն։
6. Ընկերութեան արհեստանոցի երեխաների պատրաստած առարկաները։
7. Նէլցկի ռուսական կրուժեվաներ։
8. Ուգոչկա և բուֆէտ։

Մուտքը՝ մեծերի համար 20 կոպէկ, փոքրերի համար 10 կոպէկ։

Սկիզբը առաւօտեան ժամը 12-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։

(հ.) 1—1

Շարունակվում է

«ՄՈՒՐՃ»

ԱՄՍԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս են տեսել 1906 թ. №№ 1 և 2, շուտով լոյս կը տեսնի № 3 Նոր բաժանորդները ձրիաբար ստանում են 1905 թ. №№ 11—12։

Բաժանորդագինն է՝ տարեկան Ռուսաստանի և Պարսկաստանի համար 10 ռուբլի, արտասահմանի համար (12 ր., 32 ֆր.)։ Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս։ Ծխական դպրոցներում ուսուցանողների, գիւղական քահանաների, ուսանողների, բանւորների և աշակերտների՝ համար տարեկան բաժանորդագինը 8 ր., որ կարելի է վճարել մաս-մաս (սկզբում 4 ր., մայիսի 1-ին 4 ր.)։ Թիֆլիսում դիմել խմբագրատուն (Ջավչավաձեան փողոց, տուն № 12) և «Գուտտենբերգ» գրախանութը (Երևանեան հրապարակ)։ Դրսից դիմել՝ Тифлисъ, въ редакцію «Мурчъ.»

1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւններ. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւնները գաւառից. Մամուլ. Շիպկայում ամեն ինչ հանգիստ ու անդորր չէ. Դատաստանական դահլիճից. Ով պիտի որոշէ պետական բիւջետը. Ծագող կիսալուսինը. Նամակ Ալէքսանդրոպոլից. Պարտականութիւն թէ խաղկատակութիւն Նամակներ խմբագրութեան ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

XIX

Անդրկովկասի ինքնավարութեան հարցը, որ կազմում է մեր երկրի կուսակցութիւնների ծրագիրների էական կէտերից մէկը, որ պէտք է գտնէ Պետական Դումայում աջող ջատագովներ և փաստաբանողներ։

Ընտրելով պատգամաւոր, մենք պէտք է որոշ կերպով գիտենանք թէ ինչ է պաշտպանելու մեր պատգամաւորը պարլամենտում, արդեօք առանձին ազգերի ինքնավարութիւններ, թէ ընդհանուր համերկրային աւտօնօմիա, թէ մի որ և է ուրիշ կազմակերպութիւն։ Այդ հարցի վերաբերմամբ թէև տեղի են ունեցել բազմաթիւ խորհրդակցութիւններ մեր երկրում, բայց և այնպէս դեռ չէ որոշվել թէ որն է դրված հարցի ամենից աւելի նպատակայարմար լուծումը։

Հարցը համարվում է դեռ իր քննութեան և ուսումնասիրութեան շրջանում։

XX

Որքան յայտնի է դարձել մինչև այժմ, կովկասեան ազգերը զանազան հայեցակէտեր ունեն տեղական ինքնավարութեան հարցերի մասին։

Վրացիների մէջ գերակշռութիւն են ստացել այն տարրերը, որոնք ցանկանում են կազմել մի ուրոյն վրացական հող և նրա վրա հաստատել Վրաստանի աւտօնօմիա։ Ճիշտ է ծայրահեղ կուսակցութիւնների մէջ կան անձեր, որոնք չեն համակրում Վրաստանի աւտօնօմիային, բայց վրացի հասարակական գործողների ընդհանուր կարծիքը Վրաստանի աւտօնօմիայի կողմն է։

Վրաստան ասելով վրացիները հասկանում են Քութայիսի նահանգը ամբողջապէս, իսկ Թիֆլիսի նահանգը մի քանի բացառութիւններով, օրինակ՝ հանելով Ախալքալաքի, Բօրչալուի գաւառները և Զաքաթալի շրջանի մեծագոյն մասը։

Եւ անկասկած վրացիները կը ցանկանային, որ իրանց պատգամաւորը պաշտպանէր Պետական Դումայում վրացական աւտօնօմիայի պահանջը։

XXI

Հայերը առաջ չեն մղել առանձին Հայաստանի ինքնավարութեան ծրագիր Անդրկովկասում, այլ առաջարկել են մի այնպիսի կազմակերպութիւն, որը կարողանայ նպատակայարմար լինել թէ հայերի և թէ Անդրկովկասում ապրող միւս տարրերի համար։

Դա մի կողմից մանր, ինքնավարական մարմիններ կազմելու ծրագիրն է, իսկ միւս կողմից ընդհանուր անդրկովկասեան ազգային ժողովի կամ սէյմի ծրագիրը։

Հայկական ծրագիրները մանրամասն չեն մշակված մինչև այժմ։

Բայց, անշուշտ, նրանք պէտք է կարելին չափ շուտ ուսումնասիրութեան ենթարկվեն և մշակվեն, որպէս զի մեր երկրի պատգամաւորները կարող լինեն ներկայացնել Պետական Դումային հայերի տեսակէտը ու կարծիքը այդ հարցի մասին և չը խօսեն այնտեղ այն բաները, որոնք կազմում են միայն նրանց անհատական հայեցակէտերը։

XXII

Դաղստանի ներկայացուցիչները և առհասարակ մահմեդական տարրերը առանձին գլուխ չեն կոտրում աւտօնօմիայի գաղափարի համար, որովհետև նրանք դեռ անդրդուելի պահանջներ չեն զգում աւելի ինքնուրոյն քաղաքական կարգեր ստեղծել — կուլտուրական գործունէութեան համար։ Նրանք աւելի հեշտութեամբ կը հաշտվեն ամեն մի կառավարական ձևի հետ, որը նրանց վրա ծանր հարկեր չի դնի և բարդ գործավարութիւն չի մտցնի վարչական կարգերի մէջ։

Ճիշտ է, մահմեդական ինտելիգենցիայի մի մասի մէջ նոյնպէս հասունացել է Անդրկովկասեան ինքնավարութեան գաղափարը, բայց նա դեռ շատ քիչ ծաւալներ է նուաճել։

Յամենայն դէպս՝ մի բան պարզ է, որ մահմեդական պատգամաւորները թէև առանձին ուժեղ դրդումներ չեն ունենայ պնդելու Անդրկովկասի ինքնավարութեան հարցերի վրա, բայց և այնպէս աւելի այդ առաջարկի կողմը կը լինեն, քան ուրոյն ազգային ինքնավարութիւնների։

XXIII

Եթէ հաշուի առնենք, որ բացի ինքնավարական հարցերից, առհասարակ յատուկ քննութեան առարկաներ պէտք է լինեն օտարացեղներին վերաբերեալ խնդիրները և նոյնպէս ծայրագաւառների կառավարելու հարցերը, մենք կը տեսնենք, որ անդրկովկասեան պատգամաւորների վրա ծանրացող պատասխանատւութիւնը և առհասարակ պարտականութիւնները թեթևներից չեն։

Օտարացեղների դրութիւնը Ռուսաստանում եղել է ամեն ժամանակ սուր և անախորժ հարցերից մէկը։ Իրաւունքների կրճատումը, զանազան շրջաբերականներով սահմանափակումները, տեղական վարչութիւնների կամայականութիւնները ստեղծել են իրականութեան մէջ մի սարսափելի կացութիւն, որի ոչնչացման համար օտարացեղները այժմ իրանց յոյսը դրել են ազատ Ռուսաստանի ազգային ժողովի վրա։

XXIV

Մեր բոլոր ասածներից պարզ է, որ Անդրկովկասում պատգամաւոր ընտրելը և նրան դէպի Պետական Դումա ուղարկելը լուրջ մի խնդիր է, որը մենք չենք կարող լուծել վայրիվերոյ և թեթևամտաբար։

Թէ մեր կուսակցական ծրագիրներին հաւատարիմ և հաստատ մնալը, թէ աջող պատգամաւորներ գտնելը և թէ նրանց ընտրութիւնները ապահովելը պէտք է դառնան մեր հոգածութեան առարկան առաջիկայ մի քանի շաբաթներում։

Արդէն վերջանում են ընտրողական ցուցակներ կազմելու ժամանակամիջոցները և մօտենում են ընտրութիւնները։

Մենք պէտք է կարող լինենք մեր հայեցակէտերը և մեր կամքը իրագործել կեանքի մէջ աջող ընտրութիւններով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փոխարքայի վարչութեան կից հայ-թուրքական ժամանակաւոր խորհրդակցութեան նախագահ է նշանակվել Փոխարքայի կողմից պ. Վէյտէնբաումը։

Թիֆլիսի թեմի առաջնորդը գեներալ Լևիցկուն հեռագրով խնդրել էր կոզէնցիների համար պահապաններ նշանակել Թովուզ կայարանից մինչև մի որ և է հայաբնակ գիւղ, որոնք վերադառնում են իրանց տեղը. ի պատասխան այդ հեռագրի առաջնորդն ստացել է հետևեալ հեռագիրը.

Ղազախ, 19 մարտի

Թիֆլիս, Գարեգին արքեպիսկոպոսին

«Կոզէնցիները կարող են գալ ամեն ժամանակ և ապրել ուր որ կամենան։ Ապահովութեան ոչ ոք կարիք չունի։ Կոզէնցիների համարեա բոլոր կարողութիւնը պահվում է թուրքերի մօտ»։

Գեներալ Լևիցկիյ

Գանձակի գաւառից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ վերջին ժամանակներս այնտեղ կատարվող թուրքական յարձակումները ծանր տպաւորութիւն են թողնում հայերի վրա։

Ոսկանապատ, մարտի 16-ին

Ամսիս 14-ին մեր մասի պրիստաւը կալանաւորեց և բանտ ուղարկեց բաղմանլարցի Ղուրբանին, որ առաջ անտառապահ էր, և իր ընկեր անտառապահի և ուրիշ երկու այրումի հետ դարանից գնդակահար էին արել անցեալ դեկտեմբեր ամսում չորս ոսկանապատցիների, որոնց մէջ և գիւղի ծխատէր քահանայ Մ. Տէր-Յովհաննիսեանցին։

Նոյն օրը Միրզիկ և Բանանց գիւղերի սահմանում «Խաչի Սեռ» կոչվող տեղը գտնվել է մի հայ երիտասարդի դիակ, յօշոտված ուրիշ տեղ և ձգած ճանապարհի վրա. ասում են Գառնակեր գիւղացի է։

Եղանակը զգալի կերպով տաքանում է, իսկ Թօփալհասանլուեցիները ազատ սպառնալիքներ են ղրկում դէպի հարևան հայաբնակ գիւղերը, որոնց հետ նրանք տեսնելու հաշիւներ ունեն, միայն սպասում են ծառերի և թփերի տերևներով ծածկվելուն։ Բայց հայ գիւղացիները վտանգները անցած են համարում և մեծ հաւատ են ընծայում Թիֆլիսի համագումարին, որը սակայն դրական ոչ մի բարիք չէ խոստանում հային։

Նիկ. Գրիգորեանց

Բագու, 19 մարտի

Երէկ գիշեր մի խումբ ծպտեալ չորեքով, հագած պրոկուրորի, ժանդարմի և օկոլոտօչնիի զգեստ, մտնում է թուրքական մի քանի գրասենեակներ, իբր թէ կեղծ փողեր որոնելու նպատակով։ Շուտ չեն ճանաչվել խաբեբաները։ Քիչ է մնացել սխալի մէջ ընկնի պարսկական հիւպատոսը։ Հէնց որ կասկած է առաջանում, ծպտեալները փախչում են, տանելով մի քանի հարիւր ռուբլի։

Բագու, 17 մարտի

Բողդան Դօլուխանեանի թէ երէկ երեկոյեան և թէ այս առաւօտվայ բիւլլետենները շատ լաւ են։ Բժիշկները հրատարակում են բիւլլետեն, որը լինում է կլուբում, հիւանդանոցի դռան վրա ու գրասենեակում,—որովհետև բազմաթիւ անձինք գալիս գնում են, ուստի, որպէս զի նեղութիւն չը լինի ամենքին պատասխանել, գրվում են բիւլլետեններ։

Այսօր առաւօտեան 7—8 բժիշկները վճռեցին, որ բարդութիւն այլ ևս դժուար թէ լինի, կը բերեն հիւանդանոցից իր տունը։ Այժմ ոչ մի կասկած չը կայ, որ խփողը հայ է։ Տեսնենք թէ քննութիւնից ինչ կը դուրս գայ։ Ուրեմն մի բան հաստատ է, որ թուրքերը ոչ մի կապ չունեն այս դէպքի հետ։

«Каспій» լրագիրը վերջերումս էլի սկսել է տգեղ դիրք բռնել. տպել է այն կանոնադրութիւնը, որը Հաջիևը համագումարում ներկայացրել էր. էլի մի երկու տենդենցիօզ հեռագիրներ էր տպել Գանձակից և ուրիշ յուզիչ լուրեր։

Հ.

Հաղրութ (Ջիբրայիլի գաւ.), մարտի 21-ին, 11 ժամ 50 րօպ. ցերեկվայ.

Շուշու հաշտարար միջնորդ Երմօլաևը կոզակների և արտիլերիայի հետ միասին Տօղի ձորում շարունակում է իր սխրագործութիւնները։ Զինաթափ եղած հայերից փող է պահանջում։ Տօղի ձորը միակն էր, որ ազատ էր մնացել թուրքերի աւերածութիւններից։ Ռմբակոծվել են Թաղլար, Տօղ, Սարգիսաշէն, Մոխրենես և Տումի հայ գիւղերը։ Բնակիչներին ծեծում, կանանց բռնաբարում, թալանում են, չը նայած որ բնակիչները իսկոյն և եթ կատարում են բոլոր պահանջները։ Վայրագութիւնները, թալանը, հրդեհումները, յամառ շարունակվում են։ Անտառներում պատսպարված ժողովուրդը սարսափի մէջ է։ Իշխանութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում։

Բաղդասարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դարալագեազ, մարտի 13-ին։ Անցեալ անգամ գրել էի, որ թուրքական Սալլի գիւղում անյայտացրել են 3 հայերի։ Վերջերումս, պրիստաւ Դուլինսկու կատարած քննութեան ժամանակ, սալլեցի թուրքերը ցոյց տուին, որ վերոյիշեալ երեք հայերին անյայտացրել են իրանց հարևան Հորս գիւղի թուրքերը։

Դէպքը եղել է այսպէս. Սալլի գիւղում 3 հայերին պատահում են 4—5 հորսեցիներ, որոնք օրը ցերեկով հայերին զոռով Հորս գիւղն են տանում։ Այնտեղ մի քանի բանիմաց թուրքեր ընդդէմ են լինում հայերի սպանմանը, բայց նրանց խօսքը չէ անցնում։ Հաւաքվում են մեծ թւով հորսեցիներ, կին թէ մարդ և մեծ հանդէսով մորթում են անմեղ հայերին, ուշադրութիւն չը դարձնելով նրանց լացին ու աղաչանքին։ Հայերը երեքն էլ բազմանդամ ընտանիքի տէր մարդիկ են և այդ անբախտ ընտանիքները մնացել են գլխովին անտէր, առանց մի ապրուստի միջոցի և նիւթական օգնութեան։ Երևանի նահանգապետը առաջարկել է գաւառապետին պահանջել հորսեցիներից հայերի դիակները և նրանց սպանող չորս թուրքերին, հակառակ դէպքում, նրանց խիստ պատժել։

Նորակոչ զինւորները երբ մեկնում էին այստեղից, մենք ափսոսում էինք, որ մեր երիտասարդ ուժերը հեռանում են մեզանից. իրերի այսպիսի խառն դրութեան ժամանակ, այդ բաւական չէր, այժմ էլ ամեն մի գիւղից դէպի Բագու և Ռուսաստան են դիմում մեծ թւով երիտասարդ բանւորներ։ Անցեալ օրը պատահեցի մօտ 30 քարագլուխցի հայերի, բոլորն էլ 20—25 տարեկան երիտասարդներ, որոնք նոյնպէս դիմում էին օտարութեան։ Զունորութիւնը ստիպում է նրանց այս տագնապալից րօպէներին թողնել հայրենի օջախը բախտի խնամքին և պանդխտութեան ցուպը ձեռքն առնել։

Ներկայումս գաւառամասումս է գտնվում Երևանի շրջանային դատարանի առանձին կարևոր գործերի քննիչ Վէգմինը, որը ուղարկված է քննութիւն կատարելու յատկապէս տեղումս պատահած հայ-թուրքական ընդհարումներից փչացած վայրերում։

Մալիշկա գիւղում այս օրերս երևում է մի տեսակ հիւանդութիւն։ Հիւանդները մի երկու օր պառկելուց յետոյ, կապտում են ու մեռնում։ Այդ հիւանդութեանը զոհ գնացին մալիշկեցի Նիկօլայ Մանուկեանը և ամենից սիրված երիտասարդ Լևոն Շահբազեանը։

Եղել են նաև «рожа» կոչված հիւանդութեան դէպքեր, հիւանդացան 2 մարդ, որոնք զրկվեցին աչքի լոյսից։ Այս դէպքում հանդէս է գալիս գիւղական ամենագէտ դալլաքը իր սուր ածիլիով, և վարակում է միամիտ ու տգէտ գիւղացիներին։ Այս բոլորի մասին երէկ խօսեցի գաւառամասիս պրիստաւի հետ և խնդրեցի շուտափոյթ բժշկական օգնութիւն։

Ի դէպ՝ գաւառամասիս ամենից սիրված բժիշկ Գիլներին փոխել են Աշտարակ գիւղը. նրա այստեղից հեռանալը մեծ ցաւ է պատճառել ազգաբնակութեանը։ Սպասում ենք նոր գաւառապետ Ջեզզինիձէին, որի գաւառումս ինչ դիրք բռնելու մասին կը գրենք իր ժամանակին։

Գաւառամասիս 5 գիւղական հասարակութիւններից 3-ում սկսվել է վար ու ցանքը իսկ 2-ում, այն է Ալագեազի և Գնդեվազի հասարակութիւններում, գետինը ծածկված է ձիւնի հաստ շերտով, տեղ-տեղ 1½ արշին հաստութեամբ։

Տեղիս հայկական գիւղերում եղած քիւրդ հովիւները կենտրօնանում են Նամազալի քըրդական գիւղում, չը նայած մինչև այժմս հայերը նրանց հետ ոչ մի ընդհարում չեն ունեցել։

Վ. Դովլաթեան

ՄԱՄՈՒԼ

Ռուս քահանայ Գէօրգի Գապօնի անձնաւորութիւնը և այն դերը, որ նա խաղաց ռուսական ազատագրական շարժման և 1905 թ. յունվարի դէպքի մէջ—յայտնի է ամենքին։ Յայտնի է և այն, որ հոկտ. 17-ի մանիֆէստի հրատարակութիւնից յետոյ Գապօնը թոյլտւութիւն ստացաւ կոմս Վիտտէից Ռուսաստան վերադառնալ և ապրել Պետերբուրգում։ Ռուսաց Սինօդը կարգազուրկ է արել դեռ անցեալ տարի Գապօնին և այժմ նա գործում է, իբրև աշխարհական։

Սակայն նրա Ռուսաստան վերադառնալուց յետոյ մի քանի լրագիրներ սկսեցին խիստ աննպաստ և մերկացողական յօդուածներ տպել նրա գործունէութեան և շարժառիթների մասին և մեղադրել նրան զանազան կեղտոտ արարքների մէջ։ Սկզբում այդ լուրերը և մեղադրանքները հրէշաւոր էին թւում, այնքան բարձր էր հասարակութեան մէջ Գապօնի բարոյական հեղինակութիւնը և դէպի նրա անձնաւորութիւնը ունեցած յարգանքը, բայց մեղադրանքները հետզհետէ սկսեցին որոշ կերպարանք ստանալ և «Русь» լրագիրը ուղղակի անուանեց նրան դաւաճան ազատագրական շարժման և պնդեց, որ նա գործակալ է Վիտտէ-Դուրնօվօ մինիստրութեան ու նրանից նպաստներ է ստացել։ Վերջ ի վերջոյ Գապօնի դէմ այնպիսի ամբաստանութիւններ բարդվեցին, որոնք, եթէ միայն ճշմարիտ են և արդիւնք չեն որ և է խոշոր ու հրէշաւոր ինտրիգի, պարզ ցոյց են տալիս, թէ հասարակութիւնը որքան խաբված է եղել՝ ընդունելով իբրև հերոս մի խարդախ և դաւաճան մարդի ու նոյն իսկ պրօվօկատորի։

Ահա այն մեղադրանքները, որոնք բարդվում են Գապօնի վրա. 1) Նա դաւաճանել է ազատագրական շարժման, 2) ոստիկանական գաղտնի գործակալ է և պրօվօկատոր, 3) օգտվելով իր քահանայական աստիճանից բանտի մէջ, նա բռնաբարում էր անմեղ աղջկանց և յետոյ երեսի վրա ձգում, 4) վերջապէս նա ստացել է 30,000 ռուբլի կոմս Վիտտէից բանւորներին օգնելու պատրուակով և իւրացրել։

Ինչպէս տեսնում էք, սոսկալի, ծանր մեղադրանքներ մի մարդի հասցէին, որին դեռ մի քանի ամիս առաջ ամբողջ Ռուսաստանը համարեա պաշտում էր, իսկ Եւրոպայում ևս ահագին հռչակ էր վայելում։

Խնդիրը մնում է մութ և չը պարզված։ Ինքը Գապօնը նորերս մի նամակ է ուղղել բոլոր լրագիրներին, որի մէջ բողոքելով բողոքում է այդ հրէշաւոր մեղադրանքների դէմ, անուանում է նրանց զարշելի զրպարտութիւններ և բացատրելով թէ 30,000 ռուբլու և թէ բռնաբարված աղջկանց պատմութիւնը, յայտնում է, որ պատրաստ է իր դատը յանձնել հասարակական կուսակցութիւնների դատարանին, որտեղ նա կապացուցանէ իր անմեղութիւնը։

«Եւ այն ժամանակ դուք կը տեսնէք,—այսպէս է վերջացնում նա իր նամակը—որ Գէօրգի Գապօնը, կարգազուրկ եղած քահանան, սիրում է իր հայրենիքը մինչև իր արեան վերջին կաթիլը և կը մեռնի իբրև հաւատարիմ պահապան ռուսական ազատագրական շարժման բանւորական մասսաների մէջ, իբր նախկին դիրքում, բանւորական կազմակերպութիւնների կողքին։»

Սպասենք հասարակական դատարանի դատավճռին և կանխաւ չը դատապարտենք Գապօնին, որի անունը այնքան սերտ կերպով կապված է ռուսական յեղափոխութեան դուռը բաց անող յունվարի 9-ի դէպքի հետ։

*

Շմիդտի գործից յետոյ ահագին յուզմունք է յարուցել Ռուսաստանում ջահել օրիորդ Սպիրիդօնօվայի գործը։ Դեռ հազիւ 21 տարեկան այդ օրիորդը, ինչպէս գիտենք, մեղադրվում է Տամբօվի նահանգական վարչութեան խորհրդական Լուժենօվսկու սպանութեան մէջ։ Նրա դատը ենթարկեցին զինւորական դատարանի քննութեան, որ այս օրերս դատապարտեց նրան կախաղանի։ Պէտք է ասել սակայն, որ մինչև դատը, խեղճ և թշուառ աղջիկը ենթարկվել էր սոսկալի տանջանքների և բռնաբարութեան կոզակ Աբրամօվի և ոստիկան Ժդանօվի ձեռքով և այդ տանջանքների հետևանքն եղել էր այն, որ նա ստացել էր սաստիկ բարակցաւ։ Ի նկատի ունենալով նրա այդ սոսկալի տանջանքները, դատարանը, սահմանելով նրան մահվան պատիժ, միջնորդութիւն է յարուցել փոխարինել մահվան պատիժը մշտական բանտարկութեամբ։

Այդ առիթով «Рус. Вѣдомости» լրագիրը ասում է.

«Այժմ ևս, ինչպէս և Շմիդտի գործում, ամբողջ հասարակութիւնը, ամբողջ մամուլը յուզմունքով պէտք է հետևի, արդեօք էլի մի նոր գլխատումն պէտք է կատարվի։ Ռուս հասարակութեան պարզ արտայայտած ցանկութիւնը անզօր հանդիսացաւ Շմիդտին փրկելու համար։ Այժմ հասարակութեան ձայնին միանում է և դատաւորների միջնորդութիւնը, որոնք կարողացան տեսնել, թէ որքան շատ տանջանքներ է կրել թշուառ աղջիկը դեռ դատաստանից առաջ»։

Մի այլ տեղ լրագիրը ասում է.

«Եթէ երիտասարդութեան մէջ ստեղծվում է այնպիսի տրամադրութիւն, որ մղում է նրան դէպի այնպիսի գործ, որի նմանը կատարեց Սպիրիդօնօվան, ուրեմն րէպրէսսիաները և զինւորական դատարանները չեն, որ կարող լինեն ոչնչացնել այդ տրամադրութիւնը։ Որքան շատ լինի րէպրէսսիան, որքան շատ կատարվեն անօգուտ անգթութիւններ, այնքան մեծ կը լինի վտանգը, որ Սպիրիդօնօվայի օրինակից կը գնան ուրիշները և վերջ չի լինի այն բռնութիւններին վերևից և ներքևից, որ մենք համարում ենք դժբախտութիւն մեր երկրի համար, մեր ամբողջ ապագայի համար։ Միայն կուլտուրական միջոցներով կարելի է կռւել տէրրորի հետ։ Եւ մենք կամենում ենք յուսալ, որ Սպիրիդօնօվայի բախտը վճռելիս ի նկատի կունենան, որ թշուառ աղջիկը այնքան շատ տանջվել է և արդէն գերմարդկային տանջանքներով քաւել է իր կատարածը»։

Բայց ընդունակ է այժմեան կառավարութիւնը լսել մարդասիրութեան ձայնին։

*

«Ինչ է պէտք Կովկասին» վերնագրով մի յօդուածով «Ստրանա» թերթը (№ 17), խօսելով հայ-թուրքական համագումարի մասին, հետևեալն է ասում.

«Հայ-թուրքական կօնֆերէնցիայի նիստերը վերջացան։ Մեր թղթակիցը հեռագրեց այդ նիստերի որոշումները, ինչպէս և Փոխարքայի ճառի համառօտ բովանդակութիւնը։ Կովկասում դեռ չը տեսնված այդ համագումարի յաւերժացման համար որոշված է հիմնել համալսարան Կովկասում…։ Կովկասի ժողովուրդի այդքան համեստ և սաստիկ ցանկութիւնը շատ տարիների ընթացքում, չը նայելով բազմաթիւ միջնորդութիւններին, վերջապէս գուցէ իրագործվի։

«Ինչ վերաբերում է իրան հայ-թուրքական կօնֆերէնցիային, երկու կողմերի ներկայացրած ծրագիրների քննութեանը և իրան Փոխարքայի եզրափակման ճառին, մենք չենք կարծում, որ այդ իրողութիւնը կարողանայ վերջապէս խաղաղացնել երկիրը և սկսել տայ նրա կանօնաւոր կուլտուրական զարգացումը։

«Անդրկովկասի վիճակը վերջին ժամանակներս շատ բարդվել է։ Վստահութեան և յարաբերութիւնների անկեղծութեան բացակայութիւնը երկրի նոյն իսկ կուլտուրական ազգութիւնների մէջ սաստիկ խոր է, շնորհիւ երկարամեայ պրօվօկացիայի և ազգայնական թշնամութեան զգացման։

«Ոչ մի կասկած չը կայ, որ Կովկասի ժամանակակից կրիտիքական դրութեան գլխաւոր պատճառը պէտք է որոնել այն քաղաքականութեան մէջ, որով ղեկավարվում էր մի քանի տարի առաջ կառավարութիւնը և որը, բացի դրանից, այնքան անկարող կերպով իրականացնում էր կեանքի մէջ տեղական վարչութիւնը: Գոլիցինեան ռէժիմը, և միայն նա ստեղծեց տրագիքական վիճակը երկրում:

«Հասկանալի է, որ պաշտօնական ներկայացուցիչ կոմս Վորոնցով-Դաշկովը չէր կարող այդ ասել իր ճառի մէջ և նա պէտք է այդ դրութեան պատասխանատւութիւնը ձգէր ժողովուրդի վրա, հայ զինւորված կազմակերպութիւնների և կամ Թուրք աւազակախմբերի վրա, որոնք ղեկավարվում են ազդեցիկ անձերի ձեռքով»:

Ապա խօսելով այն մասին, որ երկիրը խաղաղացնելու համար պալիատիւները և բարի իղձերը բաւական չեն, լրագիրը այն կարծիքն է յայտնում, որ Կովկասի կանոնաւոր զարգացման համար հարկաւոր է լայն տեղական ինքնավարութիւն:

«Չը կայ մի երկիր, որ լինէր այնքան ինքնատիպ և օրիգինալ իր աշխարհագրական, էտիքական և կուլտուրական պայմաններով, ինչպէս Կովկասը: Դա մի տեսակ Շվեյցարիա է, բայց անհամեմատ աւելի հետաքրքրական: Մենք տեսնում ենք այդտեղ խմբերի զարգացման բոլոր աստիճանները, եւրոպական և ասիական ցեղերի գրեթէ բոլոր նմուշները:

«Այդպիսի մի երկիր, որ ունի իր առանձին բարքերը, դարերով մշակված, իր անյիշատակ ժամանակներից մնացած աւանդութիւնները, չէ կարող կառավարութեան որ և է ընդհանուր ձևի տակ մտնել, չէ կարող միացնվել Ռուսաստանի հետ ընդհանուր օրէնքներով:

«Երկրի բարեկեցութեան համար, մարդկութեան ընդհանուր բարիքի համար անհրաժեշտ է մշակել տեղական օրէնքներ, յարմարեցրված տեղական պայմաններին, որպէս զի ամեն մի ազգութիւն, ամեն մի ցեղ, ամեն մի անձնաւորութիւն զարգանայ յօգուտ ամբողջ ռուսաց պետութեան, ամբողջ ռուսական քաղաքակրթութեան: Պէտք է, որ ոչ բարքերը, ոչ աւանդութիւնները, ոչ լեզուն, ոչ գրականութիւնը չենթարկվեն նախատինքի կամ ոչնչացման, այլ պահպանվեն և զարգանան պրօգրէսի բնական օրէնքների համաձայն»:

*

Նոյն «Սարանս» լրագրում (№ 20) մի պարոն, ըստ երևոյթին ռուս, Գ. Ս.-վ ծածկանունով, մի գեղեցիկ յօդուած է տպել «Կովկասի խռովութիւնների մասին» վերնագրով, որի մէջ, հիմնւելով այն իրողութեան վրա, որ հայ-Թուրքական համագումարը ոչ մի հետևանքի չը հասաւ և չը լուսաբանեց հայերի և Թուրքերի եղբայրասպան մրցութեան իսկական պատճառները, ինքն իր կողմից, իբրև Կովկասում երկար ժամանակ ապրած մարդ, լուսաբանում է պատճառները: Նա հերքում է բոլոր այն մեղադրանքները, որոնք բարդվում են հայերի վրա, ցոյց է տալիս, որ հայ ինտելլիգենտը և բանւոր պրօլետարիատը ոչ մի բանով չէ տարբերվում ռուս պրօլետարիատից և ստութիւն ու զրպարտութիւն է համարում այն ամբաստանութիւնը, թէ հայերը ցեղական թշնամութիւն են տածում դէպի Թուրքերը: Նա նկարագրում է հայերին, իբրև Կովկասի ազգաբնակութեան ամենից շատ կուլտուրական, ամենից շատ գիտակից տարրը, ռուսական տարրի հետ միասին, ցոյց է տալիս, որ հայերը ստեղծել են իրանց ինտելլիգենցիան, ստեղծել են այն նոր կեանքի փառաւոր և տոկուն լէգիոնէրներ, որով ապրում է այժմ ամբողջ մտածող, գիտակից Ռուսաստանը: Թուրքերին նա բնորոշում է իբրև վերին աստիճանի անկուլտուրական, փակված և հասարակական շարժումից շատ հեռու կանգնած մի տարր, որի հոգեկան կեանքը շատ աննշան է:

Այդ յօդուածի թարգմանութեան հետ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին:

«ՇԻՊԿԱՅՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉ ՀԱՆԳԻՍՏ ՈՒ ԱՆԴՈՐՐ ՉԷ»

Մի քանի ամսվան ատելական ամենավայրագ բռնութիւններից, տասնեակ հազարաւոր անմեղների արիւնը հոսեցնելուց, երկրի ամենաարժանաւոր զաւակներին բանտերում ու աքսորավայրերում փակելուց և ամբողջ Ռուսաստանը մի կատարեալ սպանդանոց ու պատերազմի դաշտ դարձնելուց յետոյ, Վիտտէ-Դուրնովոի կառավարութիւնը դեռ նոր էր գլուխը ինքնահաւան պարծենկոտութեամբ բարձրացրել ամբողջ աշխարհին յայտարարելու թէ՝ Շիպկայում ամեն ինչ հանգիստ է և անդորրութիւն է տիրում,—և ահա նորից Ռուսաստանի վրա մութ ամպեր են հաւաքվում և մօտալուտ որոտի նշաններ են երևում: Վերջին օրերում լրագրերը բաւական անհանգստացնող կօլօրիտ են կրում. թէ և դեռ ամեն բան պարզ և որոշ չէ, բայց էլի նկատւում է, որ այնտեղ, Ռուսաստանի զանազան անկիւններում մի ինչ որ բան է կատարվում և շուտով մի մեծ փոթորիկ է սպասվում: Մոսկվայից գրում են, որ այնտեղ կառավարութիւնը նորից շարժողութեան մէջ է դրել զօրքերը, բայց այս անգամ ոչ թէ յարձակողական, այլ աւելի պաշտպանողական դիրք բռնելու համար: Անհանգստացնող լուրեր է ստացել ու շարունակում է ստանալ ոստիկանութեան դեպարտամենտը, թէ՝ հարաւային նահանգներում մեծ խլրտումներ կան բանւորների մէջ և հսկայական գործադուլներ են պատրաստվում, իսկ Սարատովի կողմերում գիւղացիական շարժումները սկսվել են արդէն: «Ի լրումն այս բոլոր դժբախտութիւնների», ասում են, որ Սեվաստոպոլի նաւային զօրքը նորից ապստամբել է և շատ սպառնական դիրք է ընդունել: Մի խօսքով՝ բոլոր նշաններից երևում է, որ Շիպկայում բոլորովին հանգիստ և անդորր չէ:

Ով գիտէ, գուցէ այս բոլոր լուրերը սաստիկ չափազանցված են. կարող է և պատահել, որ այդ բոլորը դարձեալ բիւրօկրատիայի արդինք են, որը նկատելով, որ յեղափոխականները ապստամբութեան պատրաստութիւններ են տեսնում, աշխատում է արուեստական պրօվօկացիայով ժամանակից առաջ ապստամբութիւնը առաջ բերել, որպէս զի կարողանայ աւելի հեշտութեամբ նրան ճնշել, խեղդել:

Ինչ էլ որ լինի, այնուամենայնիւ համարձակութեամբ կարելի է ասել, որ Շիպկայում ամեն ինչ հանգիստ և անդորր չէ: Եւ յիրաւի, ինչպէս կարելի է մի երկրում, որի տնտեսական ու սօցիալական կեանքի պայմանները զարգացնել, հասունացել են այն աստիճան, որ այլ ևս նրա քաղաքական կազմը, պայմանները չեն համապատասխանում նրա տնտեսական կեանքին, նեղում, խանգարում են նրա յետագայ զարգացմանը, ուստի և այդ երկրի ժողովուրդը շատ բնական կերպով ձգտում է ազատվել իր տնտեսական ու հասարակական կեանքը կաշկանդող քաղաքական պայմաններից և ստեղծել աւելի համապատասխան, աւելի նպատակայարմար քաղաքական կազմ,—կրկնում ենք, ինչպէս կարելի է մի այդպիսի երկրում խաղաղութիւն ու անդորրութիւն հաստատել սուիններ ու գնդածիգների օգնութեամբ: Եթէ կարելի է արգանդում զարգացած մանուկին թոյլ չը տալ ծնվելու, առանց մանուկին և մօրը մահ պատճառելու, եթէ կարելի է ձուի մէջ զարգացած ճուտիկին թոյլ չը տալ ձուի կեղևը կոտրելու և լոյս աշխարհ դուրս գալու, այն ժամանակ կարելի կը լինի ասել, որ տնտեսապէս ու իր հասարակական կեանքով զարգացած ժողովրդին էլ արգելել իր քաղաքական կազմն ու ձևը յեղափոխելու:

Ռուսաստանի ամենամեծ դժբախտութիւնը հէնց նրանումն է, որ նրա կառավարչական մարդիկ միշտ կարծել ու կարծում են, թէ երկրի բոլոր յեղափոխական շարժումները «կրամոլա»-ի կամ օտարացիների ազդեցութեան շնորհիւ եղած բաներ են: Այդ տգէտները հասկացողութիւն անգամ չունեն, որ մեծացած երեխային չէ կարելի օրօրոցի մէջ գետեղել: Բայց չէ՛ նրանք ուզում են, որ երեխան միշտ օրօրոցում պառկի և, երբ տեսնում են, որ երեկվայ երեխան այսօր արդէն պատանի է դառել ու այլ ևս չէ ցանկանում օրօրոցում պառկել, փոխանակ նրան մի մեծ մահճակալ տալու, աշխատում են սղոցով նրա ոտները կտրել... և այդ վայրենութիւնը, արգէնների խօսքով, խաղաղացնելու քաղաքականութիւն է անւանվում:

Ոչ, Շիպկայում հանգստութիւն չէ կարող լինել: Ժամանակաւոր խաղաղութիւններից երբեք չը պիտի խաբվել, ամենահասարակ մանկավարժութիւնն էլ մեզ ապացուցանում է, որ ծեծն ու բռնի միջոցները միայն առաջին անգամն են վախ ու սարսափ ազդում, իսկ երբ նրանք մի քանի անգամ կրկնվում են, այլ ևս ոչ մի ազդեցութիւն չեն թողնում և ընդհակառակը աւելի գրգռում և վրէժխնդիր են դարձնում մարդուն: Բացի դրանից՝ ներկայ ռէակցիայի զօրեղանալը պիտի բացատրել մեծ մասամբ և նրանով, որ միջին կուսակցութիւնները, յեղափոխականների յաղթական գործունէութիւնից և ծայրահեղ պահանջներից սարսափած, յանկարծ երես դարձրեցին նրանցից և նորից բիւրօկրատիայի պաշտպանեցին, հաւատացած լինելով, թէ սա կը փրկէ իրանց սպառնացող վտանգից և արդարութեամբ ու ճշտութեամբ կը գործադրէ հոկտեմբերի 17-ի մանիֆեստով արդէն խոստացված սահմանադրական կարգերը: Սակայն նրանք վերջը հեազհետէ համոզվեցին, որ իրանց հաշիւները բոլորովին սխալ էին. բիւրօկրատիան, օգտվելով նրանց վախկոտութիւնից, սկսեց կամաց կամաց յետ վերցնել ու ոչնչացնել այն բոլորը, ինչ որ արդէն արված կամ խոստացված էր կայսերական մանիֆեստով:

Այդ բոլորից յետոյ, միջին կուսակցութիւնները կամ բուրժուազիան չէին կարող չը սթափվել ու չը զգալ իրանց սխալը. նրանք վերջնականապէս համոզվեցին, որ եթէ սպառնացող վտանգ կայ, այդ ոչ թէ ծայրահեղ կուսակցութիւնների կողմից է, այլ շատ աւելի բիւրօկրատիայի կողմից, և նրանք, փոքր ինչ տատանվելուց յետոյ, նորից սկսեցին օգնութեան ձեռք պարզել իրանց հեռաւոր ապագայի հակառակորդներին, բայց այս օրվայ ամենավստահելի դաշնակիցներին...

Այո, Շիպկայում դեռ ամեն ինչ հանգիստ ու անդորր չէ: Խ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

III

Փետրվարի 14-ին դատաստանական քննիչը Աննա Աղամեանի ներկայութեամբ խուզարկութիւն կատարեց Մանսուր Ամիր օղլու տանը, որտեղ Աղամեանը ճանաչեց իրան պատկանող մետաքսէ թաշկինակը: Աղա-Բաբա Բերբալայ-օղլու տունը խուզարկելիս, Աղամեանի իրեղէնները գտնելու նպատակով, վերջինս տեսնելով Աղա-Բաբայի եղբօրը Աբիւլ-Հասանին, յայտնեց, որ նա էլ Աղա-Բաբայի հետ մասնակցում էր իր տան կողոպուտին. խուզարկութեան ժամանակ Աղա-Բաբայի տանը ոչ մի կասկածելի բան չը գտնվեց, իսկ Աբիւլ-Հասանի տանը մի տոպրակի մէջ գտնվեց լօտօ, որը Աղամեանը ճանաչեց իրանը. բացի դրանից գտնվեց պիստօնաւոր մի հրացան և ալիւրի տոպրակի մէջ մի ատրճանակ, որի մասերը հանված էին: Հարցաքննութեան ենթարկվելով իբրև մեղադրվողներ Բերբալայ-Մանսուր Ամիր օղլին և Աբիւլ-Հասան Բերբալայ-օղլին, իրանց մեղաւոր չը ճանաչելով, բացատրեցին. Մանսուրը՝ թէ ջարդերի օրերը իր տանը ապրում էին երկու հայ ընտանիքներ—Աղասին և Նիկիտան, որոնց նա պահպանում էր և տնից չէ հեռացել, և որ իր տանը գտնված թաշկինակը իրանն է, իսկ Աբիւլ-Հասանը՝ թէ դէպքի օրը նա իր ընկեր Աղա-Հիւսէյնի հետ երբ անցնում էր Աղամեանների տան մօտից, նրանց խնդրանքով գնեց նրանց համար հաց, և երբ նա Աղամեանցների տան մօտն էր, եկան մի խումբ իրան անծանօթ Թուրքեր, յարձակվեցին տան վրա և սկսեցին կոտորել բնակիչներին, և նա վախեցած թողեց փախաւ. նրա տանը գտնված լօտօն պատկանում է իր անհարազատ եղբօր Աբաս-Ալու կնոջը՝ Մինա-խանումն Ալլահվերդի ղըզին, որը այդ լօտօն գնել է վաղուց: Մեղադրվողների ցուցմունքի համաձայն հարցաքննութեան կանչեցին Նիկիտա Ներսիսեանին, որը բացատրեց՝ թէ անկարգութիւնների օրերում, նա ապրում էր Մանսուրի տանը, որը բերում էր իրանց համար հաց և պահպանում էր իրանց: Աղասի Տէր-Վարդանեանցը բացատրեց, որ նա թէև ապրում էր Մանսուրի տանը, բայց անկարգութիւնների օրերում գտնվում էր ծանօթների մօտ: Մինա-խանումը ցոյց տուեց քննութեան ժամանակ, որ Աբիւլ-Հասանի տանը գտնված լօտօն իր ամուսնունն է: Բագու քաղաքում պատահած յիշեալ դէպքերի օրերում, նաւթահանքերի շրջանում, թէև դրութիւնը լարված էր, բայց նա արտայայտութիւն էր ստանում մասնակի ընդհարումներով, իսկ մասսայական բնաւորութիւն նա ստացաւ միայն փետրվարի 10-ից սկսած: Այդ օրը Ռամանիում առաւօտեան ժամի 10-ից մուսուլման ամբոխը զինված բերդաններով ու ատրճանակներով, գնդակներ պարպելով հայերի վրա, շարժվեց դէպի Փիթօյեանի նաւթահանքը և այստեղ սպանելով 6 հայ բանւորներ և վիրաւորելով 9 հոգու, անցաւ դէպի «Կասպիական ընկերութեան» նաւթահանքը, սպանեց 11 հոգու և նրանց գոյքը յափշտակեց: Այնտեղից ամբոխը յարձակվեց Մանթաշեանի նաւթահանքի վրա հետևեալ պարագաների մէջ. հայ բանւորները տեղեկութիւն ստանալով Փիթօյեանի և «Կասպիական ընկերութեան» մէջ կատարված կոտորածի մասին, մեծ թւով հաւաքվեցին նաւթահանքի գրասենեակի բակը: Ոստիկանութեան ենթարկվելով Թուրքերի կողմից՝ նրանք ներս փախան կազարմաները, այդ ժամանակ մի քանիսները՝ Դօշար Արութիւնեանցը, Բաղդասարեանցը, Միրզա Մնացականեանցը, Նիկոլայ Ջավադեանը, Նիկոլայ Ակօփեանը, Ալեքսանդր Դաւթեանցը և Օհան Ստեփանեանը փախան մասն էլեքտրական բուդկան № 131: Կարճ ժամանակից յետոյ էլեքտրոմատորի տնակին մօտեցան 30—40 հոգի Թուրքեր և սկսեցին հրացաններով կրակել դէպի տնակը, իսկ յետոյ կոտրեցին դռները, ներս մտան և սկսեցին կոտորել ներսում եղողներին խանջալներով և ատրճանակի հարւածներով: Յարձակվողների թւում բուրաւոյ վարպետի օգնական Բօչար Յարութիւնեանը և տարատյրչիկ Միրզա Մնացականեանցը ճանաչել են Մանթաշեանի նաւթահանքի կլիւչնիկ, նրանց պաշտօնակից, Քերիմ Մահմուդ-օղլուն, որը, չը նայելով նրանց աղերսանքին—խնայել, օֆիցէրական տեսակի ատրճանակով երկու գնդակ արձակեց Բօչար Յարութիւնեանի վրա, վիրաւորելով նրան կրծքի աջ կողմից երկու տեղ, գնդակի մի հարւածով սպանեց Նիկոլայ Դաւթեանին և թեթև կերպով վիրաւորեց Միրզա Մնացականեանի ձախ թեւը և խանջարով հինգ տեղից վիրաւորեց Օհան Ստեփանեանի գլուխը: Երբ այդ բոլորը կատարվում էր էլեքտրոմատորի տնակում, դրանից ոչ հեռու գտնվում էին Մանթաշեանի նաւթահանքի գիշերապահ ծառայ Կ. Աստուածատրեանը և նոյն նաւթահանքի կօչեգար Թէոս Շահնազարեանը, առաջինը թաղնվում է բուրաւօյ № 163 պաշտպանում, իսկ երկրորդը՝ կօչեգարկայի պաղ կաթսայում և հէնց որ դադարում է հրացանաձգութիւնը, նրանք գնում են էլեքտրոմատորի տնակը, որտեղ տեսնում են վիրաւորներին, այդ ժամանակ Բօչար Յարութիւնեանցը իսկոյն յայտնում է, որ նրան վիրաւորեց կլիւչնիկ Քերիմը, նոյնը ասացին ևէ Յարութիւնեանը և թէ միւս վիրաւորները իրանց մօտ յաճախողներին, նոյնը ասացին և հիւանդանոցից դուրս գալուց յետոյ Արտաշէս Մելիք Շահնազարեանին, Յակովը Թինիբէկին, Ասրի Օհանեանին, Բաղդասար Մելքումեանին, Բախման-բէկին, Մահմէդ Ալի օղլուն և Նիկոլայ Մոսէսովիչ Տէր-Մկրտչեանին:

Հարցաքննութեան ժամանակ մեղադրվող Քերիմ Մահմուդ օղլին բացատրեց, որ նա փետրվարի 10-ին ամբողջ օրը գտնվում էր Մանթաշեանի կազարմում՝ Ռամանիի լճին մօտիկ և որ հայերին կոտորելու մասին նա իմացաւ միայն երեկոյեան, սակայն, մեղադրվողի ցուցմունքի համաձայն հարցաքննվող, բուրաւօյ վարպետ Կոնստանտին Տէր-Սարգսեանը վկայեց, որ Քերիմ Մահմուդ օղլին փետրվարի 10-ին միւս բանւորների հետ միասին աշխատում էր բուրաւօյ № 94-ում: Հեռանալիս, վկան հրամայում է բանւորներին թագնվել այդ վիշկայի մէջ, իսկ երբ կէսօրին, ժամի 4-ին վերադառնում է, բոլոր բանւորները այստեղ ներկայ են լինում, բացի Քերիմ Մահմուդ օղլուց, և հէնց այդ օրն էլ իմացվեց, որ Քերիմը մասնակցել է հայերի կոտորածին: Այդ միևնոյն օրը, փետրվարի 10-ին, Արելեանի գործարանի բանւոր Պետրոս Մարտիրոսեան Յարութիւնեանը ուղևորվում է դէպի հայոց գաղութը իր ընտանիքի մօտ և երբ անցնում էր Ռոտշիլդի կօչեգարկի մօտից, որ գտնվում է Սաբունչի գիւղում, պատահեց մի Թուրքի, որ ձեռին չայնիկ բռնած գնում էր դէպի բանւորների կազարմը: Յարութիւնեանցի հարցին, թէ ինչպէս անցնել Ռոտշիլդի հիւանդանոցի բակը, Թուրքը այնպէս սպառնալից նայեց նրա վրա, որ Յարութիւնեանը հեռու փախաւ նրանից, իսկ Թուրքը ներս վազելով կազարմը, այնտեղից դուրս եկաւ ուրիշ Թուրքերի հետ միասին ու սկսեց վազել Յարութիւնեանի յետևից և, հասնելով նրան, խանջարի հարւածներով վիրաւորեց նրա ձախ ուսը 4 սանտ. երկարութեամբ, ձախ ձեռքի 5-րդ մատը կտրեց և վիրաւորեց գլուխը ձախ քունքի մասում 10 սանտ. երկարութեամբ, որի խորութիւնը հասնում էր մինչև ոսկոր: Իսկ երբ Յարութիւնեանը դուրս պրծնելով նրա ձեռքից փախաւ, Թուրքերից մէկը ատրճանակ պարպեց նրա վրա, բայց վրիպեց:

Յարութիւնեանի օգնութեան ձայնին դուրս վազեցին մօտիկում գտնվող Գէորգ Ղազարեանը, Նազար Մելիքեանը և Միքայէլ Տէր-Եսայեանցը, որոնք ականատես եղան բոլոր պատահածին. սրանցից վերջինը ճանաչեց Յարութիւնեանին վիրաւորող Թուրքին, որ Ռոտշիլդի նաւթահանքի կօչեգար Րահիմ Մօլլա Հաջի օղլին էր: Վերջինիս, որ թագնվել էր կազարմում, բռնեց գօրօդօվօյ Մամեդ Գանի Իսլիզ օղլին: Ռոտշիլդի նաւթահանքի գործակատար Ստեփան Անտոնովիչ Լապացկու, նրա կնոջ Ագրիպպինայի, նեֆտեպրօվօդի կառավարիչ Վիտոլաս Շիմանովսկու, նաւթ ընդունող Միխայիլ Եկնիխեանի ցուցմունքներով նրանք տեսել են, թէ ինչպէս ատրճանակ արձակելուց յետոյ, վերադառնում է կօչեգար Րահիմը, մի ձեռքին բռնած ատրճանակ, իսկ միւսում խանջարը, մի և նոյն ժամանակ Ագրիպպինա Լապացկայան տեսել է, երբ Րահիմը վազում էր հայի յետևից, որից յետոյ անմիջապէս յաջորդեց ատրճանակի ձայնը:

Երբ Րահիմ Մօլլա Հաջի օղլուն ներկայացրին Յարութիւնեանին, նա յայտնեց, որ այդ նոյն Թուրքն է, որը իրան վիրաւորեց խանջարով: Լապացկիների աղախին Ակսինիա Ջերնեայեվայի և վերոյիշեալ Նազար Մելքումեանի ցուցմունքով, որ թագնվել էր անկարգութիւնների ժամանակ ուրիշ հայերի հետ միասին Լապացկիների մօտ, Րահիմը խնդրեց Ջերնեայեվին յայտնել Լապացկուն, որպէս զի նա չը թագցնէ հայերին, ապա թէ ոչ շատ վատ կը լինի նրա համար: Քննութեան ժամանակ մեղադրվող Րահիմ Մօլլա Հաջի օղլին բացատրեց, որ հանդիպեց երկու հայի, որոնք սկսեցին իր վրա ատրճանակից գնդակ արձակել, բայց չը կրակվեց, այն ժամանակ նա իր կեանքի պաշտպանութեան համար յարձակվեց հայերի վրա ու վիրաւորեց նրանցից մէկին ձեռքից: Վերոյիշեալ ցուցմունքների հիման վրա, Բագուի նահանգի և նրա գաւառի Մաշտագի գիւղի բնակիչ Բերբալայ Մանսուր Ամիր օղլին՝ 50 տ., Նովխանի գիւղացի Աբիւլ-Հասան Ֆիրազ-օղլի՝ 20 տարեկան, պարսկահպատակներ՝ Քերիմ Մահմուդ օղլի՝ 25 տ. և Րահիմ Մօլլա Հաջի-օղլի՝ 42 տ., մեղադրվում են այն բանում, որ ցեղական թշնամութիւնից դրդված դէպի հայերը, մասնակցելով հրապարակական համախմբման, Բերբալայ Մանսուր Ամիր օղլին և Աբիւլ Հասան-Բերազ օղլին փետրվ. 9-ին Բագու քաղաքում, ներս խուժելով Յովսէփ Աղամեանի տունը, կողոպտեցին նրա և նրա տնւորների ինչքը և ատրճանակի գնդակներով ու խանջարի հարւածներով սպանեցին Յովսէփ Աղամեանին, Եգօր Բիլլուրբէկեանին, Միքայէլ Ղարագեօզեանին, Աբգար Դաւթեանին և Սիմէօն Աղամեանին, և սպանելու նպատակով ատրճանակի գնդակ արձակելով՝ վիրաւորեցին Սօֆիա Բիլլուրբէկեանին ոտից և Եղիսաբէթ Դաւթեանին ազդրից, բայց իրանց նպատակին չը հասան, որովհետև ստացած վէրքերը պատահաբար մահացու չէին:

Քերիմ Մահմուդ-օղլին, փետրվարի 10-ին Մանթաշեանի Ռոմանիի նաւթահանքում ատրճանակի գնդակներով սպանեց բանւոր Նիկոլայ Դավլաթեանին և սպանելու նպատակով ատրճանակի գնդակներ պարպեց Մանթաշեանի գործարանի բուրավօյի վարպետի օգնական Բօչար Յարութիւնեանի վրա, երկու խոր վէրքեր հասցնելով կրծքի աջ մասում և նոյն նպատակով խանջարի 5 հարւածներով վիրաւորեց բանւոր Օհան Ստեփանեանի գլուխը, բայց թէ այս և թէ միւս դէպքում չը հասաւ իր նպատակին, որովհետև վէրքերը պատահաբար մահացու չէին:

Րահիմ Մօլլա-Հաջի օղլին փետրվարի 10-ին Սաբունչի գիւղում, Ռոտշիլդի գործարանի մօտ, սպանելու նպատակով խանջարի հարւածներով վիրաւորեց Աբելեան գործարանի բանւոր Պետրոս Մարտիրոսեան Յարութիւնեանցի գլուխը և ձեռքը, բայց իր նպատակին չը հասաւ, որովհետև հասցրած վէրքերը պատահաբար մահացու չէին: Այդ յանցանքների վերաբերմամբ, համաձայն պատժական օրէնք. 259 յօդուածի, և բացի դրանից Բերբալայ Մանսուր-Ամիր օղլու և Աբիւլ Հասան-Բերազ օղլու և Քերիմ Մահմուդ օղլու համար պատժակ. 2 մ. 1459 և 9, 2 մ. 1459 յօդ. հիման վրա ևս, Րահիմ Մօլլա-Հաջի օղլու համար 9, 2 մ. 1459 յօդ. պատժ. օրէնք. հիման վրա: Այդ պատճառով և պատ. օր. 1260 յօդ. հիման վրա Բերբալայ Մանսուր-Ամիր օղլին, Աբիւլ Հասան Բերազ օղլին, Քերիմ Մահմուդ օղլին ենթարկվում են Բագուի նահանգական դատարանի քննութեանը հոկտեմբերի 14-ին 1905 թւի, Բագու քաղաքում:

ՈՎ ՊԻՏԻ ՈՐՈՇԷ ՊԵՏԱԿԱՆ ԲԻՒՋԷՏԸ

Պարլամենտի կամ ժողովրդի բոլոր խաւերից ընտրված պատգամաւորների ժողովի ամենագլխաւոր դերը նրանումն է կայանում, որ նա է որոշում Պետական բիւջէտը, այսինքն՝ ամեն տարեգլուխ հաշիւ են առնում ու որոշում են թէ՝ ինչ եկամուտներ պիտի ունենայ կառավարութիւնը, ինչ նոր հարկեր պիտի նշանակել, եղածներից որը պիտի վերացնել, և ապա թէ՝ այդ եկամուտները ինչ ձևով և ինչի վրա պիտի ծախսէ կառավարութիւնը: Այս հարցը ասում ենք սահմանադրական երկիրների ամենաէական և ամենակարևոր կողմն է ու հէնց դրանով է տարբերվում իսկական սահմանադրական երկիրը միապետական կամ կիսասահմանադրական երկիրներից: Պետական բիւջէտը քննելու և որոշելու իրաւունքը ամենազօրաւոր և միակ սանձն է, որով պատգամաւորական ժողովը կարողանում է սանձահարել և նրան այս կամ այն ուղղութիւնը տալ: Առանց այդ սանձի, առանց այդ իրաւունքի պատգամաւորական ժողովը կամ պարլամենտը մի կատարեալ խրտուիլակ է դառնում:

Արդ՝ պիտի ունենա՞յ Ռուսաստանի պարլամենտական ժողովը կամ Պետական Դուման, ինչպէս նրան են անւանում, այդ իրաւունքը: Մինչև Պետական Դումայի ընտրութիւնների սկսվելը Ռուսաստանի ամեն մի քաղաքացի, հիմնվելով հոկտեմբերի 17-ի մանիֆեստի վրա, այնպէս էր հաւատացած, թէ այո, Դուման է՛ որ պիտի քննէ ու որոշէ պետական բիւջէտը: Բայց ահա սկսվում են ընտրութիւնները և, նրա ամենատաք ժամանակ, կառավարութիւնը լոյս է ընծայում մի ինչ որ «կանոններ պետական եկամուտներն ու ծախսերը քննելու և որոշելու եղանակի մասին»: Եւ այս «կանոնները» գալիս են միանգամայն հիասթափեցնելու այն բոլորին, որոնք նկատելով հանդերձ գումարվելիք Դումայի բոլոր թերութիւնները, այնուամենայնիւ հաւատում էին, թէ նա, իր ձեռքում ունենալով բիւջէտը կազմելու իրաւունքը, կը կարողանայ շատ ու շատ օգտակար ու արդիւնաւոր գործեր կատարել:

Ահա թէ ինչ են ասում այդ կանոնները. Դումայի իրաւունք է տրվում պետական եկամուտները քուէարկել առանձին-առանձին յօդուածներով, իսկ ծախսերը առանձին բաժանմունքներով: Եկամուտները յօդուածներով քուէարկելու մասին խօսք չունենք ասելու, բայց ծախսերը բաժանմունքներով քուէարկելը նշանակում է արդէն ոչինչ չը քուէարկել և կառավարութեանը իրաւունք տալ իր հայեցողութեամբ դասաւորել ու անել այդ ծախսերը: Մեր խօսքը պարզ ու հասկանալի դարձնելու համար, վերցնենք մի այսպիսի օրինակ. ենթադրենք ծախսերի Թ. բաժանմունքը կազմված է ա. բ. գ. ստորաբաժանմունքներից, որոնցից ա-ի համար կառավարութիւնը պահանջում է 7 միլիոն րուբլի, բ-ի համար 5 և գ-ի համար 3 միլիոն, ընդամենը Թ. բաժանմունքի համար 15 միլիոն:

Ստորաբաժանմունքները կամ յօդուածները առանձին-առանձին քննված դէպքում, Պետական Դուման կարող է գտնել օրինակի համար, թէ բ-ի համար 5 միլիոնը բոլորովին աւելորդ է և կարելի է այդ ծախսը դուրս գցել կամ թէ իջեցնել երկու միլիոնի, իսկ գ-ի համար նշանակված 3 միլիոնը ընդհակառակը շատ քիչ է և պէտք է նրան բարձրացնել 5 կամ աւելի միլիոնի և այլն: Սակայն նոր հրատարակված կանոնների հիման վրա, կառավարութիւնը թոյլ չը պէտք է տայ Դումային այդպիսի մանրամասնութիւնների մէջ մտնել. նա պէտք է ներկայացնէ ամբողջ Թ. բաժանմունքի ընդհանուր գումարը—15 միլիոն, որ աւելի կամ պակաս քուէարկվելուց յետոյ, կառավարութիւնը ինքը պէտք է որոշէ թէ ա. բ. և գ. ստորաբաժանմունքներից իւրաքանչիւրի համար քանի քանի միլիոն պէտք է յատկացնել: Եւ դրա հետևանքը այն կը լինի, որ օրինակի համար Դուման որոշում է կառավարութեանը 15 միլիոն ծախսել այն ցանկութեամբ միայն, որ 12 միլիոնով ժողովրդական ուսումնարաններ բացվեն, իսկ 3 միլիոնը ոստիկանութեան վրա ծախսել, իսկ կառավարութիւնը ճիշտ հակառակն է որոշում և 12 միլիոնը յայտնի ու գաղտնի ոստիկանութեան վրա ծախսում, իսկ 3 միլիոնը միայն ժողովրդական ուսումնարանների վրա:

Դրանով չեն վերջանում «կանոնները». շտապողական դէպքերում, ասված է այդ կանոնների մէջ, մինիստրական խորհուրդը կարող է, առանց Դումայի գիտակցութեան, այս կամ այն ծախսը աւելացնել. իսկ եթէ այս ինչ ծախսը գաղտնի է, այն ժամանակ այդ ծախսի մասին Դումային պէտք է յայտնել, երբ գաղտնիքը արդէն դադարած չը լինի գաղտնիք լինելուց: Իսկ այն, թէ ով պէտք է որոշէ արդեօք, որ այս ինչ ծախսը շտապողական է և այն ինչը պէտք է գաղտնի լինի,—այդ մասին ոչինչ չեն ասում հրատարակված կանոնները:

Պալատական մինիստրի ծախսերը պէտք է որոշվեն 1906 թւականի նախահաշւով և Դուման իրաւունք չունի ոչ պակասացնել և ոչ էլ փոփոխութեան ենթարկել այդ ծախսերը, թէկուզ կայսերական ընտանիքի մէջ փոփոխութիւններ էլ տեղի ունենան: Այս էլ դեռ բաւական չէ. կանոնների 8-րդ յօդուածը ասում է՝ «չեն կարող ոչնչացվել կամ փոփոխութեան ենթարկվել այն եկամուտներն ու ծախսերը, որոնք նախահաշւի մէջ են մտցրած արդէն ոյժ ունեցող օրէնքների, պօլօժէնիաների, շտատների, ինչպէս և Բարձրագոյն հրամանների հիման վրա, որոնք արձակվել են Բարձրագոյն վարչական կարգով»:

Այստեղ արդէն նկատի են առնված այն օրէնքները, շտատներն ու հրամանները, որոնք հրատարակվել են Դումայից շատ առաջ: Կը նշանակէ, մինիստրութիւնը միշտ կարող է օգտվել այդ յօդուածով և, հիմնվելով նրա վրա, հէնց Դումայի նիստերի ժամանակ, Բարձրագոյն կարգով եկամուտների ու ծախսերի ցուցակ կազմել և անցկացնել, առանց նրա—Դումայի—կարծիքն անգամ հարցնելու:

Այս բոլորից յետոյ ակամայից հարցնում ես՝ էլ ինչու համար է հաւաքվելու այդ մեծահռչակ Դուման, ինչու համար են ամբողջ երկիրը իրարանցման մէջ դրել և ընտրութիւններ կատարում: Եւ արժէ՞ միթէ այդ, չը ծնված, բայց արդէն խրտուիլակ եղած Դումայի վրա յոյսեր դնել ու նրանից մի որ և է բան սպասել: Միթէ մեզ չէ՞ այն աշխատանքն ու էներգիան, որ սպառում են մի ինչ որ խրտուիլակ-Դումա ստեղծելու համար...

Ռ.

ԾԱԾՈՒԿ ԿԻՍԱԼՈՒՍԻՆԸ

III

Մահմէդ Ալլի անունով մի մարդ Կ. Պօլսից դեռ հոկտեմբերի կիսին տպագրեց «Сынъ Отечества» թերթում «իր մեծ դժուարութիւններով ձեռք բերած թանգագին դօկումենտների» մի մասը՝ Անդրկովկասում ապստամբութիւն առաջացնող թիւրքական գործակալների տեղեկագիրները: Այդ գործակալներից մէկը անդրկովկասեան Թուրք է Գանձակից, իսկ միւս երկուսը թիւրքացած զինւորներ: Մնալով ռուսահպատակներ և վաճառականներ լոկ իրանց անցագրով, նրանք ապրում են Թիւրքիայում և նոյն իսկ այնտեղ գտնվում են պետական ծառայութեան մէջ: «X փաշայի հրամանով, ասված է այդ դօկումենտի մէջ, ես անմիջապէս Թիֆլիսից ճանապարհվեցի դէպի Շուշի և յաջորդ հրահանգները ստացայ արդէն Բագւում»: Ձեռնարկութեան աջողութիւնը հիմնված էր այն բանի վրա, որ ռուսաց կառավարութեան վերաբերմունքը դէպի մուսուլմանները բարեհաճ է:

«Մեր ազդեցիկ ընկերների պրօտեկցիայի շնորհիւ, բայց ի հարկէ, գլխաւորապէս փողի ոյժով, մեզ աջողվեց տեղաւորել ոստիկանական ծառայութեան մէջ մեր գործի համար անհրաժեշտ մարդկանց: Իշխան Ն. ասում և խոստանում էր, որ հնարաւորութեան չափ ամեն միջոց գործ կը դնէ հեռացնելու պաշտօնից մեզ խանգարող հայերին, բայց... մեր բոլոր ջանքերը զուր կորան, նրա հետ միասին և հազար րուբլին, որոնց բաժանման իբրև ապացոյց կցում եմ սրա հետ ստորագրութիւնը: Մեր նպատակը սկզբում ուղղված էր հայերի դէմ, և դրա շնորհիւ մենք փարատեցինք ամենաչնչին կասկածն անգամ... Մի հանգամանք քիչ էր մնացել, որ փչացնէր ամբողջ գործը: Այն նաւը, որով զէնք էր բերված, բռնվեց, հարկաւոր էր կաշառք տալ, իսկ այդ ժամանակ հակառակի պէս փող էլ չունէինք: Շնորհակալութիւն Մ.-բէկին, որը առանց ուշացնելու գտաւ այդ անհրաժեշտ գումարը և մենք գիշերը շոգենաւից զէնքերը դուրս տարանք ու մի և նոյն օրն էլ բաժանեցինք մարդկերանց»:

«Թանգագին դօկումենտից» առաջ բերված այդ վերոյիշեալ քաղուածքը ցոյց է տալիս, թէ ինչպէս ոսկին Կովկասում հովանաւորում է երկաթին և թէ ինչպէս մասամբ գլուխը կորցրած, մասամբ էլ լաւ կաշառված ադմինիստրացիայի աչքի առաջ հոգու խաղացված այդ սարսափելի, Ռուսաստանի վրա այնքան թանգ արժեցող, արեան ծովի գնով ձեռք բերված երկիրը նորից է դառնում մեզ համար «կորստաբեր»: «Այն ամենը, ինչ որ կատարվում է ներկայումս Կովկասում, գրում են գործակալները, կարելի է համարել մեծ գործի սկիզբը»...

Ես խնդրեցի հայ ազգասէրին համառօտ կերպով ձևակերպել կատարված դէպքերը: Նա դուրս հանեց նախապէս պատրաստված «յուշատետրը», որից, նրա ընդարձակ լինելու պատճառով, ես կարող եմ վերցնել միայն մի քանի կտորներ, այն էլ շատ համառօտիւ:

«Մի տարուց աւելի է, ասված է այդ յուշատետրում, որ Բագուի, Երևանի, համարեա ամբողջապէս Գանձակի և մասամբ էլ Թիֆլիսի գաւառներում տեղի են ունենում այնպիսի անցքեր, որոնք հնարաւոր են միայն կառավարչական իշխանութեան կատարեալ անկման ժամանակ: Խաղաղ կուլտուրական ազգաբնակութիւնը ենթարկվում է Թուրքական զինված հորդաների կողմից կոտորածի, աւերի ու թալանի: Աւերված են կուլտուրական գիւղատնտեսութեան վերաբերեալ բոլոր ձեռնարկութիւնները, այրված են նաւթահանքերի $^{2}/_{3}$ մասը, որոնք գանձարանին տարեկան հարիւր միլիոն րուբլի եկամուտ էին տալիս: Աւերված ու հրդեհված են օղեգործական, մետաքսագործական և պղնձագործական գործարանները, իսկ որ ամենասարսափելին է, դրա շնորհիւ ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը արդէն պրօլետարիատ է դարձել: Շատ տեղերում աշնանային ցանքսեր չեն արել, իսկ եթէ այդ անարխիային վերջ չը տրվի, այն ժամանակ ուղղակի անհնար կը լինի կատարել գարնանային ցանքսերը նոյնպէս: Սովի ահեղ նշանները արդէն նկատվում են բազմաթիւ կէտերում, իսկ քայքայված բնակիչների տուրք վճարելու ընդունակութիւնների մասին խօսելն անգամ աւելորդ է: Ամենից սարսափելին այն է, որ Պետերբուրգի իշխանութիւնը հաւատ է ընծայում կովկասեանին, իսկ կովկասեան իշխանութիւնը, մինչև վերջին ժամանակներս, կարծես թէ ներկայացնում է ռուսաց կառավարութեան չափազանց անկման կատարեալ մանրապատկերային ցուցահանդէսը: Վերջինիս անզօրութիւնը, ճշմարիտ թէ կեղծ, այդ միևնոյն է, բորբոքում է հրդեհը, փոխանակ հանգցնելու նրան: Իւրաքանչիւր անգամ, ջարդերից յետոյ, որի հետ միշտ անբաժան է կոտորածը, ադմինիստրացիան ոչինչ աւելի լաւ բան չէ գտնում, բայց եթէ խրատ ու յորդոր կարդալ ազգաբնակութեանը: Նա «հրաւիրում է» ջարդերի հեղինակներին և վնասված կողմերին «հաշտութիւն կայացնելու», «գերիներ փոխանակելու» և այլն: Կարծես թէ տեղական իշխանութիւնը Կովկասում հիւր է միայն, այլ ոչ թէ իր տանը, կարծես թէ կայսրութեան հպատակ ազգերը իրաւունք ունենին «պատերազմ» մղելու և խաղաղութեան դաշինքներ կնքելու: Իշխանաւորների սանտիմենտալ ցաւակցութիւնը ինքն ըստ ինքեան դրդում է աւելի ևս լկտիանալու յարձակվող կողմին, իսկ զոհին հարկադրում է դիմել ինքնապաշտպանութեան: Դարերից ի վեր Թիւրքիային պատկանող երկրում, որ միևնոյն է թէ Թուրքերին, թոյլ ու տկար Փոխարքայի համար անմիջական օգնականներ են նշանակում, ձմր—Սուլթան Կրիմ-Գիրէյին, Ղրիմի խաների սերունդին և Թուրք գեներալ Ալիխանովին, որ ֆանատիկ կերպով նուիրված է զուրանին: Փոխարքայի մօտ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեաներ են նշանակվում երկու Իսլամ ֆանատիկոսներ, դեռ չենք խօսում ուրիշ, դրանցից պակաս խոշորութիւն կազմող Թուրք ադմինիստրացիայի մասին, որոնք նշանակված էին դեռ ևս իշխան Գոլիցինի փոխարքայութեան ժամանակ: Հետևանքը այն եղաւ, որ երեք նահանգներ աւերվեցին, որտեղ քրիստոնէութիւնը այնուամենայնիւ դիմանում էր անյուշ ժամանակներից ի վեր: Մուսուլման տարրը դարձել է մի լաւ զինված զինւորական բանակ, իրապէս գերիշխում է Կովկասում և ձգտում հրով ու սրով ոչնչացնել գեաւուրներին: Եթէ չը լինէր հազարամեայ դրացիութիւնը Իսլամի հետ և դառն փորձերը, եթէ չը լինէին այն սանձահարող պաշտպանողական միջոցներն էլ, որ գտնվեցին հայերի մօտ, այն ժամանակ անդրկովկասեան քրիստոնէութեան լիակատար կոտորածը անխուսափելի կը լինէր: Դեռ ևս անցեալ ամառը Թիւրքական «համիդէները», քիւրդական հեծելազունդը, լաւ սպառազինված, անցան մեր սահմանները և Թուրքերի հետ միասին մասնակցում էին կողոպուտներին, ջարդերին: Եւ այս տարի, հէնց որ սահմանագլխի սարերի ձիւնը կը հալվի, մի քանի տասնեակ հազար համիդիաններ հեշտութեամբ կարող են մուտք գործել մեր սահմանները: Թիւրքիան սկզբում ի հարկէ ներողութիւն կը խնդրէ, կը բացատրէ այդ բանը քիւրդական անհնազանդութեամբ, բայց և այնպէս նրանց արշաւանքը կը լինի ազդանշան «ղազաւաթ» սկսելու, որի առաջ կը նսեմանայ մինչև անգամ Դաղստանի ապստամբութիւնը: Այս րոպէին Թիւրքիայի սահմանակից մեր քիւրդերի մէջ նախապատրաստութիւններ են տեսնվում դիմաւորելու իրանց Թիւրքիայի եղբայրներին: Թիֆլիսի թերթերի ստացած հեռագիրները Իգդիրից և Երևանից ասում են, որ ռուսահպատակ քիւրդերի ամենամեծ ցեղի ցեղապետ Ալաշրաֆ-բէգը, որ ռուսաց ծառայութեան մէջ գնդապետ է համարվում (թէև անգրագէտ) և ռուսաց կառավարութիւնից էլ կենսաթոշակ ստանում, ուղևորվեց դէպի սահմանագլխի շրջանները և խորհրդակցութիւնները սահմանագլխի հայկական գիւղերի մէջ արդէն ընդհատված են: Ալեքսանդրապոլից մի և նոյն թերթերին հեռագրում են, որ խլրտումներ են սկսվել սիւննի Թուրքերի մէջ ևս, իսկ Ղազախի գաւառում սիւննիները արդէն շիաների հետ միասին են յարձակվում հայերի վրա: Վերոյիշեալ Ալաշրաֆ-բէգը յայտնի Էյուր աղայի եղբայրն է, որը վերջին ռուս-Թիւրքական պատերազմի ժամանակ մեր կառավարութեան կողմից նշանակվել էր քիւրդական հեծելազնդի հրամանատար: Մի ճակատամարտի ժամանակ նա իր հեծելազնդով անցաւ Թիւրքերի կողմը: Փաշայութիւն ստանալով այդ Էյուրը, այժմս գտնվում է մեր սահմանակից Ալաշկերտի գաւառում և համիդէների հրամանատարն է:

Ես հարցրի հայ ազգասէրից, արդեօք, ժամանակակից հայկական կոտորածի պատճառը իրար հետ ունեցած հին հաշիւների տեսնելու արեան վրէժառութիւնը չէ:

—Ի հարկէ ոչ: Արեան վրէժառութիւնը մասսայական բնաւորութիւն չէ ունենում, և վերջապէս արեան վրէժառութիւնը տեղի է ունենում մահմեդականների մէջ ևս: Թուրքերի պարագլուխները զարմանալի դիպլօմատներ են. այդ հէքիաթով քնացնում են ռուսաց իշխանութեան ուշադրութիւնը: Որովհետև Թուրքերի մասին այն հայեացքն է կազմվել, որ իբրև թէ նա անմեղ ցեղ է, ուստի ապստամբութեան պարագլուխները ջանք չեն խնայում, իրանց ցոյց տալու միամիտ, ազնիւ ու իշխանութեանը հաւատարիմներ, իսկ գաղտնի կերպով խռովութիւն են պատրաստում:

Որ այդտեղ ցեղային թշնամութիւն չը կայ, ցոյց է տալիս հայկական ջարդերի ամբողջ տարվայ պատմութիւնը: Անցեալ տարի, փետրվարի 6-ին Բաքւում սպանվեց մի թուրք, յայտնի մարդասպան, երբ փորձում էր գնդակահարել մի հայ զինուորի հայոց եկեղեցու բակում: Թէև մինչև այդ դէպքը թուրքերը գաղտագողի սպանել էին 18 հայ, այնուամենայնիւ մուսուլմանները այդ թուրքի սպանութիւնը ընդունեցին իբրև ազդանշան խըմբական կոտորածի համար, որը տևեց ամբողջ չորս օր: Նահանգապետ Նակաշիձէն զօրքերի ու ոստիկանութեան հետ միասին լուռ հանդիսատեսի դեր էին միայն կատարում: Եւ կոտորածի հեղինակներից ոչ մէկը դատի չենթարկվեց:

Ջարդերի անպատիժ մնալը ընդհանուր հրդեհ առաջացրեց հայ-թուրքական երեք նահանգներում: Ցնցող գազանութեամբ կոտորածը բռնկվեց Նախիջևանում և նրա շըրջակայքում, հէնց այն ժամանակ, երբ փոխ-նահանգապետ Տարանովսկին հիւր էր կոտորածի ղեկավար թուրք խաների մօտ: Փոխ-նահանգապետը խաների հետ միասին յորդորեց հայերին բանալ արհեստանոցները, երաշխաւորելով ապահովութեան համար, բայց հէնց որ արհեստանոցները բաց արին, թուրքերը յանկարծակի վրա տուին նորից և հըրդեհեցին շուկայի հայկական մասը: Իսկ փոխ-նահանգապետը մատը անգամ չը շարժեց: Այդ կողոպուտների ժամանակ զինուորները քաղաքից մօտիկ զինամարզութիւններում էին պարապում: Զօրանոց վերադառնալով նրանք նախ ճաշեցին և յետոյ միայն նրանց բերին ջարդերի տեղը. կողոպուտը շարունակվում էր զօրքերի աչքի առաջ նոյնպէս: Ջարդերի հեղինակները այստեղ ևս բոլորովին անպատիժ մնացին:

Նախիջևանի գաւառը խաղաղացնելու համար այնտեղ ուղարկեցին Նախիջևանի խաների փեսայ գեներալ Ալիխանովին, արդէն մի անգամ աստիճանազուրկ արված ֆանատիկոս իսլամականին: Նրա տեղ հասնելուն պէս ջարդերը վերսկսվեցին աւելի նոր ույժերով: Ամբողջ գաւառը և ամբողջ Շարուրի տափարակը աւերվեց ու թալանվեց, մի շարք բազմաթիւ սրբապղծութիւնների ենթարկվեցին քրիստոնէական տաճարները, սրբազան անօթները և պատկերները: Եւ կարծես առողջ դատողութիւնը ծաղրելու նպատակով, գեներալ Ալիխանովը զեկուցանում էր, որ Բադամլու գիւղի հայերը յօժարակամ (այն էլ կոտորածների ամենասաստիկ ժամանակը) իսլամութիւն են ընդունել:

Մարտին կոտորածը նորից բռնկվեց Երևանում. երեք օր տեղական ադմինիստրացիան չը կարողացաւ դադարեցնել անկարգութիւնները, սակայն որոնց գեներալ Շիրգոխը վերջ տուեց մի ժամվայ ընթացքում: Ամառը Երևանում երրորդ անգամ փորձ եղաւ կոտորած սարքելու, բայց Երևանի այն ժամանակվայ գեներալ-նահանգապետ պրինց Նապոլէօնը ճնշեց մի ժամվայ ընթացքում: Այդ տեսակ եռանդուն գործունէութիւնը կարծես թէ Թիֆլիսի իշխանութեան ծրագրի մէջ չէր մտնում—և պրինցը հարկադրված էր թողնել իր պաշտօնը: Օգոստոսին թուրքերը չորս օր շարունակ աւերում-թալանում էին Շուշին, խլելով հայերից անհագին թւով զոհեր: Քաղաքի հայկական մասի երկու երրորդը այրվեց: Յանցաւորներից ոչ ոք չը պատժվեց, և կոտորածը մի անգամ ևս կրկնվեց Բաքւում, որի ժամանակ նաւթահանքերի երկու երրորդ մասից աւելին ոչնչացաւ: Մինչդեռ զօրք Բաքւում շատ-շատ կար, այն ու ամենայնիւ յանցաւորներից դարձեալ ոչ ոք չը պատժվեց: Փոխարքան Բաքւից գալով նաւթահանքերը՝ բաւականացաւ միայն աղ ու հաց ընդունելով սաբունչինցիներից, այդ կոտորածի գլխաւոր հեղինակներից: Երբ թուրքական շարժումը բռնկեց ամբողջ Գանձակի նահանգը, այնտեղ գեներալ-նահանգապետ ուղարկվեց (իշ. Նակաշիձէի քրոջ որդին) գեներալ Տակայշվիլին, որը հէնց ջարդերի դժբաղդ զոհերին, ազգաբնակութեան քրիստոնեայ մասին, հարկ համարեց հսկողութեան ենթարկել: Շարժման պարագլուխներին, թուրք բէկերին էին յանձնվել հայկական ամբողջ մասեր՝ պահպանութեան պատրուակով: Նոյեմբերի 18-ին Գանձակում թուրքերը յանկարծ յարձակվեցին շուկայում գտնվող հայերի վրա և սկսեցին կոտորել նրանց մուսուլման ոստիկանապետի ներկայութեամբ: Թուրք քաղաքապահները մասնակցում էին կողոպուտին, իսկ զօրքերը լուռ հանդիսատես էին միայն: Երբ արդէն ակնյայտնի դարձաւ, որ հայերը պատրաստված են կոտորածի, դիվիզիայի հրամանատար գեներալ Ֆիլչեր միջամտեց գործին և անմիջապէս վերականգնեց կարգը: Այդ կոտորածին մասնակցողներից, նրա հետ կապ ունեցողներից եւ ոչ մէկը պատասխանատւութեան չենթարկվեց: Միաժամանակ սկսվեցին յարձակումներ հայերի վրա Արէշի, Գանձակի ու Ղազախի գաւառներում և երկաթուղու գծի վրա: Ղազախի գաւառապետ Արնոլդը, որ մի զարմանալի բացառութիւն է կազմում անդրկովկասեան ադմինիստրացիայի մէջ, կարողացել է արմատախիլ անել գողութիւնները և թալանները այդ ամենաաւազակաշատ գաւառում, չէ թողել տուել ջարդեր կատարվելու իր մասում, անա այդ պ. Արնոլդը, թուրք-բէկերի խնդրանօք հեռացվում է իր պաշտօնից, ուղիղ այն դէպքից յետոյ, երբ նա միմիայն իր ձեռքի տակ գտնված եօթանասուն պահակներով յետ մղեց հազար հոգուց բաղկացած թուրք հորդայի յարձակումը Ղազախի վրա: Բայց հէնց որ նա այնտեղից յետ կանչվեց, թուրքերը յարձակվեցին Ղազախի վրա և երկու օր շարունակ թալանում ու այրում էին քաղաքը ոստիկանութեան և տեղական զօրամասի աչքերի առաջ:

Մինչև իսկ Փոխարքայի մայրաքաղաքը՝ Թիֆլիսը, ենթարկվեց Բորչալուի գաւառից եկած 2000 թուրք խուժանի յարձակմանը, և իշխանութիւնը մի ամբողջ շաբաթ անտարբերութեամբ էր վերաբերվում քաղաքը աւերելու համար կատարվող բոլոր փորձերին, որոնց յետ էր մղում միմիայն ինքնապաշտպանութեան խումբը. այնպէս որ զօրքերի լուրջ միջամտութիւնը չը թոյլատրվեց: Ապա թուրք հորդան, զօրքի աչքի առաջ, լիակատար ապահովված, կողոպտած իրեղէններով, անվըրդով ու աներկիւղ դուրս գալով քաղաքից, վերադարձաւ Բորչալուի և Թիֆլիսի գաւառները, այնտեղի հայ գիւղերի վրա յարձակվելու: Այդտեղ աւերվել են մի քանի գիւղեր և բոլոր օբնակիչ գիւղատնտեսական ֆէրմաները: Ամբողջ Գանձակի նահանգը և Բորչալուի գաւառը մատնված են այնպիսի անգթութիւնների, որոնց մօտ նսեմանում է նոյն իսկ Աղա-Մահմէդ-Շահի արշաւանքը, որովհետև մինչև անգամ այն ժամանակ նպատակ չէին դնում քրիստոնեաների գլխովին կոտորած անել: Գեօկչայի և Շամախու գաւառներում կազմվել են ձիաւոր հորդաներ տաժանակիր աշխատանքից փախածների ղեկավարութեամբ: Նրանք կենտրոնանում են Լաչին թուրք գիւղում: Եթէ օգնութեան չը հասնի կառավարութիւնը՝ այն ժամանակ հայերին անհագին կորուստներ են սպառնում: Ադմինիստրացիան խուլ է գտնվում նոյն իսկ դէպի այնպիսի փաստերը, ինչպէս են երկաթուղային կայարանների և պետական պահեստների (Եւլախ կայարանում) թալանվելը: Իշխանութիւնը զինաթափ է անում այն հայերին, որոնք փորձում էին աջողութեամբ պաշտպանվել թուրքերի դէմ, մինչդեռ թուրքերի հորդաները ազատ-համարձակ շրջում են իրանց համար անպատիժ կերպով երկրի մէջ: Ամառը սկսվելիս, երբ թուրքերը քոչատեղեր են հաւաքվում մեծ բազմութեամբ, պէտք է սպասել, որ տեղի կունենան ամենացաւալի անցքեր:

Այդ է հայերի ներկայացրած խնդիրքի բուն իմաստը: Նա ներկայացված է կոմս Ս. Ու. Վիտտէյին, բայց թէ ինչ հետևանք է ունեցել, այդ մեզ յայտնի չէ:

Հայերը, իրանց հաւանական կորուստից առաջ, կուզենային ասել քրիստոնեայ ռուս մեծ ազգին, որին վստահացել են նրանք իրանց ճակատագիրը, որ նա չը կատարեց իր խոստումը և դաւաճանեց քրիստոնեայ հային: Փշրված խաչի վրա նորից է ծագում կիսալուսինը, և եթէ քրիստոնեայ Ռուսաստանը մի գեղեցիկ օր յետ մղվի մոնղոլների շնորհիւ իր ամենահարուստ գաղութից, թող այն ժամանակ մտաբերէ հային, իր խորտակված փոքրիկ դաշնակցին, որը իր ժամանակին անօգնական մնալով, ուժասպառ ընկաւ ռազմադաշտի առաջապահ կէտում, փորպոստի վրա...

«Нов. Вр.»

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Մարտի 16-ին

Արդէն վեցերորդ տարեշրջանն է, ինչ գոյութիւն ունի այստեղ քաղաքական հասարակական գրադարան-ընթերցարանը՝ բացված քաղաքային վարչութեան նախաձեռնութեամբ Նորին Կայսերական Մեծութիւն Նիկոլայ II-րդի թագադրութեան յիշատակի համար:

Այդ գրադարան-ընթերցարանը գտնվելով մինչև այժմ ստորճանական կազմակերպման ճանապարհի վրա և լինելով փոքր գաւառական շրջանակի մտաւոր պաշար մատակարարող մի կրթական հաստատութիւն՝ զուրկ նիւթական լայն օժանդակութիւնից, կարողացել է միայն հետևեալ չափով գործնականացնել իր սկզբունքութեան հիմնական նպատակը—resou dêtre-ը ու գոհացնել տեղական ընթերցասիրութեան պահանջը:

Գրադարան-ընթերցարանը մինչև 1905 թիւը ձեռք է բերել մօտ 5926 հատ գիրք, որոնցից 496-ը պարբերական հրատարակութիւններ են, և բաց է թողել 367 տարեկան բաժանորդների 5562 գիրք: Յաճախորդների թիւը նոյն տարում եղել է մօտ 1363 հոգի, այսինքն աւելի պակաս, քան նախանցեալ տարում (1800). պակասորդը բացատրվում է վերջին գործադուլների և քաղ. վարչութեան շինութեան վերանորոգութեան ժամանակ *) գրադարան-ընթերցարանը յաճախելու ընդմիջումով: Գրադարան-ընթերցարանը պահվում է քաղ. վարչութեան կողմից յատկացրած 1050 ր. գումարով հետևեալ ծախսերը ծածկելու համար.—գրադարանապետին՝ 480 ր., գրքեր և պարբերական հրատարակութիւններ (47 հատ) ստանալու համար՝ 600 ր. և գիւանական պիտոյքների համար՝ 30 ր.: Գրադարան-ընթերցարանի եկամուտը կազմում է մօտ 400 ր., այսինքն ընդհանուր ծախսի $1/3$ մասը, որ ցոյց է տալիս՝ թէ գրադարանը բացված է ազգաբնակութեան մտաւոր-բարոյական մակերևոյթը բարձրացնելու սոսկ կրթադատութիւններով՝ անկախ որևէ նիւթական սպասելիքներից:

Ի նկատի ունենալով այդ, աւելի նպատակայարմար է դարձնել ձրի գրադ.-ընթերցարանի յաճախումը, մանաւանդ աշակերտների համար, քանի որ՝ մուտքը լինելով 1 կ., յաճախորդներից գոյացած տարեկան եկամուտը 13—18 րուբլուց չէ անցնում:

Գրադ.-ընթերցարանը չունենալով որոշ ֆօնդ, բացի 600 ր. տարեկան ծախսից (որից 350 ր. պարբերական թերթերի համար է), այնքան էլ հարուստ չէ մարդկային մտքի բազմազան արտադրութիւններով, գիտութեան ֆօլիանտներով, բացի Բրօկհաուզի հանրագիտական բառարանի բոլոր հատորներից, հայր Ալիշանի «Սիսուան», «Սիսական», «Այրարատ», «Շիրակ» և այլն կապիտալ աշխատութիւններից ու եւրոպական մի քանի յայտնի հեղինակութիւններից: Ուշադրութեան արժանի է այն, (ինչպէս այդ վկայում է գրադարան-ընթերցարանի ընթացիկ արձանագրութիւնը), որ այստեղ ձեռքից ձեռք խլվում են մեր անմահ վիպասան Րաֆֆիի երկասիրութիւնները, որոնցից անհրաժեշտ է մի քանի օրինակներ ունենալ ընթացիկ պահանջը բաւարարելու համար: Գրադարանին մեծ քանակութեամբ գրքեր են նուիրաբերել քաղաքացիներ Գ. Տէր-Պետրոսեանը, պրոֆ. Գր. Խալաթեանը և Նիկ. Ջիթողցեանը:

Վերջացնելով մեր խօսքը, աւելորդ չէր լինի մատնացոյց անել գրադ.-ընթերցարանի միաժամանակ բացվելու անյարմարութեան վրա, որ խանգարում է ընթերցարանի խաղաղութիւնը, և ցանկանալ, որ գրադարան-ընթերցարանի խորհուրդը (վարչութիւնը՝ կազմված քաղաքագլուխ նախագահից և 4 ձայնաւոր անդամներից) հոգ տանէր ճոխացնելու գրադ.-ընթերցարանը նորանոր գրքերով և պահելու նրան առհասարակ ծաղկած վիճակի մէջ:

Սրգ. Իսահակեան

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹԷ ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹԻՒՆ

(Վերջ)

Անցեալ 1905 թւի ամառը Կայսերական շնորհով նոր լոյս ծագեց մեր ազգային և եկեղեցական մարած իրաւունքների ու գործերի վրա. հրամայվեց յետ դարձնել եկեղեցական կալուածները և ուսումնարանները, հրամայվեց բանալ և Շուշու փակված դպրոցի դռները:

Այդ միջոցում Աշոտ եպիսկոպոսը Շուշու թեմական առաջնորդ էր և արդէն սինօդի հրամանով արձակել էր ինձ կօնսիստօրիայի ատենադպրի պաշտօնից: Երբ ժողովուրդը գունդագունդ, ի գիրկ առած ս. առաջնորդին, դիմում էր եկեղեցի իր բերկրանքն ու փառաբանութիւնները մատուցանելու հայոց կենաց համար Աստուծոյ, ինձ սեւեռելով ափսոսում էր դպրոցի հոգաբարձուներից մէկը՝ Մովսէս-բէկ Իւզբաշեան թէ՝ «քեզ արձակեցին կօնսիստօրիայից, բայց մենք կը հրաւիրենք հոգաբարձութեան քարտուղար, դու երախտիք ունիս դպրոցի վրա»... Իմ մէջ ևս յղանալով նոյն միտքը, մանաւանդ հայ-թուրքական խժդժութիւնների արիւնոտ օրերում անհնարին լինելով տանից դուրս գալ և ուրիշ տեղ պաշտօն որոնել, ես, դեռ դպրոցը չը բացված, դեռ ուսումը չը սկսած, սեպտեմբերի սկզբներին մի խնդիր գրեցի հոգաբարձութեան անունով և խնդրեցի տալ ինձ քարտուղարի և գրագրի պաշտօնները միացրած և այդ պաշտօններին յատկացրած ռոճիկներով: Այդ խնդիրը ես յանձնեցի պ. Իւզբաշեանցին՝ հոգաբարձութեան խորհրդին ներկայացնելու և մի քանի օրից յետոյ լուր ստացայ նոյն պարոնից, որ խնդիրս մերժվեց ս. առաջնորդի բարեհաճ կամքով, որովհետև ինձ սինօդն արձակել է պաշտօնից...

Ի՞նչ կապ և ի՞նչ արգելք պէտք է լինէր ինձ սինօդի հրամանով արձակելուց յետոյ արգելք դնել ուրիշ որ և է ծառայութեան մէջ մտնելու, կամ ի՞նչ քարոզագիտական և իրաւագիտական տեսակէտով, անա այդ հարցերն ինձ ստիպում էին անձամբ ներկայանալ առաջնորդին և իմանալ պատճառները: Եւ ներկայացայ: Նորին սրբազնութիւնն ինձ նախայայտնեց, որ դպրոցը եկամուտ չունի, դրամագըլուխը դեռ յետ դարձրված չէ, դրա համար էլ այս տարի որոշել են դպրոցը պահել կրճատված ծախքերով և քարտուղարութիւնն էլ յանձնել մի ուսուցչի ամսական 25 րուբլի ռոճիկով. ապա թէ՝ ըստ իր հայեցողութեան հոգաբարձութեան քարտուղարութիւնը լինելով հոգևոր-վարչական—պաշտօնական ծառայութիւն, ինքը՝ իբրև նախագահ կօնսիստօրիայի միաժամանակ և նախագահ հոգաբարձութեան՝ արգելք է գտնում և դըժուարանում է, սինօդի հրամանի տրամադրութեամբ, ինձ հոգաբարձութեան մէջ պաշտօն տալ: Բայց երբ բացատրեցի, որ ես օրէնքով ո՛չ միայն հոգաբարձութեան քարտուղարութեան, որ մի մասնաւոր ծառայութիւն է, այլ և նոյն իսկ իմ նախկին պաշտօնի մէջ վերընդունվելու իրաւունքից չեմ զրկված, նա խոստացաւ կանչել տեսուչ վարժապետին, յանձնել որ ուսուցիչ քարտուղարին՝ քարտուղարութեան փոխարէն դպրոցում վերակացութեան կամ այլ պաշտօն տալ և ապա հոգաբարձութիւնն ինձ հրաւիրէ քարտուղար: Ինձ համար հաստատուն գրաւական ընդունելով ս. առաջնորդի խոստումը՝ ես սպասում էի թէ շուտով հրաւէր կը ստանամ և եթէ մի քիչ ուշանում է, այդ կարող է տևել ամենաշատը մինչև յունվար, երբ, տօներից յետոյ, աւելի դիւրին կը լինի խոստացած փոփոխութիւնը կատարել: Սակայն այդ միջոցներում ս. առաջնորդին մօտիկ քահանաներն ինձ լուրեր էին բերում, որ արդէն իմ հարցը խափանված է, որովհետև դպրոցի հ. տեսուչն ամեն ջանք գործ է դնում այդ հարցը ջնջելու լոկ անձնական վրէժխնդրութեան ցասումով, որովհետև դպրոցի վերաբացման օրերում, դպրոցի շահերի և առաջադիմութեան սիրույ դրդված, մամուլի մէջ բողոք էր յայտնված նրա տեսչութեան դէմ, որ նա անժամանակակից և անհամապատասխան տեսուչ է և անհրաժեշտ է դպրոցի համար ունենալ աւելի արժանաւոր, ընդունակ, բարձր և բազմակողմանի գիտութիւններով օժտված տեսուչ: Մի տարրական ճշմարտութիւն, որը ամեն մի սրտացաւ հայի սրտաբուղխ ցանկութիւնը պէտք է լինէր և որը նա վերագրել էր ինձ: Դա ժամանակի վերածնութեան և մարդկային անընկճելի ազատ հայեացքների անընդհատելի պահանջն էր և ո՛չ միայն մի մասնաւոր անհատի խօսք...: Այդ լուրերն ինձ հասնելով և հաւաստացնելով որ իմ ընդունելութիւնը կախված է այդ վարդապետի մի խօսքից, ինձ խորհուրդ էին տալիս գնալ վարդապետի մօտ և ներողութիւն խնդրել!!! մի պահանջ, մի բարոյական ճնշում, որը կարող էր դնել միայն վարդապետական աններողամտութիւնը: Բայց մինչ մի դպրոցի հոգաբարձութեան դեկը ամբողջովին մարմնացած էր մի Ներսէս վարդապետի մէջ և մինչ այդ ստորին բանի միջոցներն են դատապարտում մարդկանց համոզմունքը, միացնում միտքը, կտրում լեզուն այն օրերում, երբ մարդկութիւնը բուռն բողոքով մարտնչում է մղում այդ բռնութիւնների դէմ: Ես կամեցայ այդ կամայականութիւնների թելը գտնել և ստիպված եղայ յունվարի տօներին ներկայանալ ս. առաջնորդին և բերանացի բողոք յայտնելով Ներսէս վարդապետի վարմունքի դէմ՝ մի գրաւոր խնդիր ևս ներկայացնել հոգաբարձութեան անունով, որ տան ինձ խոստացված պաշտօնը, հոգաբարձութեան համար հմուտ մի ատենադպրի գոյութիւնն անհրաժեշտ պահանջ ցոյց տալով թէ գրագրութեան կանոնաւորութեան և թէ դպրոցի նիւթական շահերի տեսակէտից: Ինձ ս. առաջնորդը հաստատում էր, որ Ներսէս վարդապետն իմ դէմ որ և է թշնամական հակում չունի և ինձ չընդունելու արգելքը եղել է «իմ գործը» և դպրոցում «արդէն քարտուղար լինելն ու նրան ուրիշ պարապմունք տալու դժուարութիւնը»: Երկու ծայրեր, որոնք իրար հակասում են.—եթէ սկզբունքի հարց է իմ գործը, ուրեմն և բնականաբար, չէ կարող լինել երկրորդ հարցը՝ քարտուղարին այլ պարապմունք չը լինելը: Կամ մէկը, կամ միւսը: Ես դարձեալ յայտնեցի սրբազանին մանրամասն բացատրութեամբ ինձ վերընդունելու արգելք չը լինելը. յայտնեցի որ ես կօնսիստօրիայում պաշտօն չեմ ուզում, այլ մի մասնաւոր տեղ: Նա միամտվեց (համոզվեց) արգելք չը լինելուն և խոստացաւ խնդիրս հոգաբարձութեան քննութեան առաջարկել, գրական ուրոզման տրամադրութիւն ցոյց տալով: Նոյն խոստումն ինձ արին և հոգաբարձուները: [1]

Սակայն ամսիս 13-ին № 38 գրութեամբ հոգաբարձութիւնը ինձ յայտնեց, որ «այս ուսումնական տարվայ ընթացքում հնարաւորութիւն չունի այդպիսի խնդիր քննութեան առնելու»: Մասնաւոր կերպով ինձ յայտնվեց, որ հոգաբարձական ժողովում, հոգաբարձուների միաձայն ցանկութեան յանկլով ս. Նախագահն առաջարկել է տեսչին, որ ուսուցչի քարտուղարութեան ժամերը լրացնէ՝ դըպրոցում նրան որ և է պաշտօն յարմարացնելով, բայց տեսուչը յայտնել է, որ հնարաւորութիւն չը կայ: [2]

Դուրս է գալիս, որ «կրճատված ծախքերով» դպրոց պահելու միտքը լոկ քօղարկութիւն է, որ դպրոցական նիւթին կեանքում ամեն մարդ իրան կողմից յատկացրած դասագնի տեղն է և միայն քարտուղարութիւնն է մատնված կրճատ ծախքի, յիրաւի այն յատուկ պատճառով, որ նրա հարցը սկզբում դրված էր ինձ համար և ուզում էին ցոյց տալ, որ ամեն բան «հոլս» են տանում մի կերպ: Սակայն հարկաւոր էր իմանալ, որ եկամուտների արդիւնաւորութեան բանալին հմուտ քարտուղարի ձեռքումն է և չը պէտք էր այդ հարցը խնայողութեան առարկայ դարձնել...:

Մի բան, որ ինձ աւելի վիշտ է պատճառում, այդ այն է, որ երբ իմ որդին տուի դպրոց սովորելու, նրանից պահանջեցին ուսման վճար: Ես հաւատացած էի թէ՝ հոգաբարձութեան քարտուղարութիւնը 1904 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներում ինքս ձրի կատարած լինելով, հոգաբարձութիւնը բարի կը գտնվէր չը պահանջելու ինձանից ուսման վճար—և ստիպված եղայ անցեալ հոկտեմբերի 18-ին խնդիր ներկայացնել հոգաբարձութեան և յիշել, որ վճարէ ինձ քարտուղարութեան երկամսեայ ռոճիկը 110 րուբլի, դուրս գալով նրանցից 16 րուբլի որդուս ուսման վարձը: Սակայն այդ խնդրին ևս մի բաւարարութիւն չը ստացայ և որդուս ամեն օր դարձնում են տուն, թէ գնա փողը բեր:

Արդ, բողոքելով հոգաբարձութեանը, որ մի որ և է մութ ույժ, լինի այն Ներսէս վարդապետը, թէ մի այլ խռովարար ձեռք, առաջ է տանում իմ դէմ իր թշնամական ձգտումները և ամեն կերպ արգելք լինում իմ քարտուղարութեան,

Բողոքելով, որ հոգաբարձութիւնը չէ գտնըվում իր իրաւունքի և պարտականութեան շրջանակի մէջ,

Բողոքելով, որ դպրոցական գործերը և եկամուտների արդիւնաւորութիւնը անտես արված են հոգաբարձութիւնից, որի վրա բարոյական ծանր պարտականութիւն կայ պահելու, պաշտպանելու և բարձր գնահատելու դպրոցի նիւթական և բարոյական շահերը,

Բողոքելով, որ 30 տարի ծառայած լինելով հոգևոր վարչութեան գործերում, զրկվելով պաշտօնից վարդապետական խարդաւանքների շնորհիւ, ունենալով դպրոցի վերաբացման գործում բարոյական վարձատրութեան պահանջ, իբրև իմ գրչով, իմ զգացմունքներով թարգման եղած հարիւրաւոր հայ մանուկների իղձերին, այսօր զրկվում եմ այդ դպրոցում մի հասարակ պաշտօն ունենալուց,

Ես իմ զայրոյթն եմ յայտնում և խնդրում յարգանօք, որ եթէ հոգաբարձութիւնդ բարոյական քաջութիւն չունենայ՝ իմ մանրամասն բացատրութիւնները լսելուց յետոյ՝ անմիջապէս իմ խնդիրը լուծել գրական մտքով, յայտնէ ինձ գրաւոր իր որոշումը, որպէս զի ես այս հարցը դնեմ հրապարակի վրա, հասարակաց դատաստանի առաջ»:

Այս բողոքը ես ներկայացնում եմ Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութեան 1906 թ. յունվարի 18-ին և մինչև փետրվարի 15-ը պատասխան չը ստանալով՝ ստիպված եմ լինում այդ օրը, էլի մի գրութեամբ, կրկնել նոյնը և յիշել թէ՝ «Հոգաբարձութեանդ համար ոչինչ անհնարին չէր ամբողջ մի ամիս մի ժողով գումարել և իր ընթացիկ հարցերի շարքում դնելով նաև իմ խնդիրը՝ մի որոշում կայացնել, քանի որ հոգաբարձուներն այժմ գրեթէ բոլորը գտնվում են քաղաքումս, ուստի յոյս ունիմ, որ հոգաբարձութիւնդ նիստի կը հրաւիրվի և շուտով ինձ մի պատասխան կը տայ»:

Հոգաբարձութիւնը, կամ աւելի ճիշտն ասած Աշոտ եպիսկոպոսը, 45 օր այդ թղթերն իր կաբինէտում պահելով և հոգաբարձուներին չը տալով կարդալու կամ գոնէ հոգաբարձական գործերում դնելու, հոգաբ. Զ. Իշխանեանի, Դ. Ներսիսեանի և Մ. Իւզբաշեանի բացակայելուց յետոյ, բօյկոտչիների հոգաբարձական ժողովում, մարտի 2-ին, երևի խաբելով թէ բողոքն իր անունով է, առանց նրա երեսուն արևորդիներին ցոյց տալու, գրել է տալիս այս պատասխանը. «Հոգաբարձութիւնս քննութեան առաւ ձեր խնդիրը (իրա՞ւ քննութեան առաւ, չենք հաւատում. եթէ անկեղծ է ձեր խօսքը, պատասխանը չը պէտք է լինէր անա ինչ)—տուած թեմիս սրբազան առաջնորդի անունով (ամօթ. ուրեմն խնդրի երեսը չէք տեսել) որոշեց մերժել ձեր խնդիրը, որովհետև այս ուսումնական տարվայ ընթացքում հոգաբարձութիւնս հնարաւորութիւն չունի այդպիսի խնդիրներով զբաղվելու»:

Սա պատասխանն է, ընթերցող, իմ գրած բողոքին և տուած հարցերին:

Փող փչել մարդկանց ականջին, թմրուկ զարկել, հասկացնել պարտականութիւնը, շըփոթել երեսներին պակասութիւնը—և նրանք քաջութիւն չունենան (իրանց խօսքով՝ հնարաւորութիւն չունենան),

1) ոչ բողոքդ կարդալու.

2) ոչ ուշադրութիւն դարձնելու նրա բովանդակութեան վրա.

3) ոչ քննելու ասածներդ.

4) ոչ իրաւացի համարելու նրանց կամ հերքելու.

և 5) ոչ հայհոյանքիդ գոնէ հայհոյանքով պատասխանելու:

Ասացէք խնդրեմ՝

Սա դիւանագիտական խեղկատակութիւն չէ՞:

Սա խղճի և պարտաւորութեան դատապարտութիւն չէ՞:

Սա մտաւոր բարոյական սնանկութիւն չէ՞:

Սա աւելի քան կոչման բարձրութեան վրա չը գտնվել չէ՞:

Սա ժողովուրդի իրաւունքի հետ կատակ անել չէ՞:

Սա անհատի խղճի ձայնի արհամարհումն չէ՞:

Եւ որ աւելին է—սա թղթի, դօկումենտի գողութիւն չէ՞. ինչու խնդիրս հոգաբարձութեան դիւանը չէ մտնում:

Իսկ իմ պահանջի խնդիրի և որդուս ընդունելութեան հարցը որտեղ մնաց:

Դատեցէք, հարցը հրապարակի վրա է, ձեր դատարանի առաջ, որին պատասխանելու բարոյական, գրական և իրաւական պատասխանատւութեան տեսակէտից պարտաւորութիւն ունի Ղարաբաղի թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը և Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութիւնը:

Մ. Տէր Սարգսեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Լայպցիգ, մարտի 24-ին

Սրտի խորին ցաւով կարդում ենք թերթերում մեր թեմական դպրոցների վարիչների հակամանկավարժական վարմունքների մասին իրանց սաների վերաբերմամբ:

Խրոնիկական հիւանդութեան փոխված յուզումներով հարուստ է մեր դպրոցական կեանքը և որին վերջ տալու համար մեր մանկավարժները միշտ գործադրել և գործադրում են տէր-Թոդիկից ժառանգված միջոցները, և մի բան շինելու տեղ՝ եղածն էլ փչացնում են:

Սրանով մեր ձայնը միացնում ենք աշակերտական բողոքներին և պահանջում, որ մեր հասարակութիւնը լըջօրէն զբաղվի իր կրթական գործով:

Լայպցիգի մի խումբ ուսանողներ. խնդրում ենք միւս թերթերին արտատպել այս նամակը:

—

Թիֆլիս, մարտի 21-ին

Հայոց եկեղեցական ծխական դպրոցների վերաբերեալ դասագրքերի շատ մեծ պակասութիւն է զգացվում, նամանաւանդ թուաբանութեան, աշխարհագրութեան, քերականութեան, գծագրութեան և համառօտ հայոց պատմութեան. չը կան յարմար դասագրքեր այդ առարկաների համար:

Սրանով հրաւիրում ենք ձեռնհաս անձանց այդ առարկաների համար կազմել դասագրքեր և «Գուտտենբերգ» գրավաճառանոցը այդ դասագրքերը կը տպագրէ, եթէ յօրինողը ներկայացնէ Ներսիսեան դպրոցի կամ Գէորգեան ճեմարանի մանկավարժական ժողովին և վերջինս՝ ձայների մեծամասնութեամբ՝ յարմար գտնէ տպագրութեան: Պայմանների մասին դիմել «Գուտտենբերգ» գրավաճառանոցը:

Գ. Գալստեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 15-ին Պետերբուրգում արտաքոյ կարգի ժողով է նշանակված Կովկասի և Անդրկասպեան երկրի մէջ ուղղակի հաղորդակցութիւն սահմանելու խնդրի վերաբերութեամբ: Այդ ժողովին մասնակցելու են շոգենաւային և երկաթուղային ճանապարհների ներկայացուցիչները:

—

Մարտի 24-ին լրանում է այն ժամանակամիջոցը, որ նշանակված էր Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու համար խընդիրքներ ներկայացնելու քաղաքային վարչութեանը: Ընդհանուր ցուցակները վարչութիւնը կը յայտարարէ ապրիլի սկզբներում:

—

Մեզ հաղորդում են, որ փետրվարի 25-ին Բեդելեանը խնդրամատոյց է եղել Ռոստովում հրատարակելու մի թերթ «Նոր կեանք» անունով:

—

Ալեքսանդրօպօլի քաղաքային դուման մենք հաղորդել էինք, որ որոշել է քաղաքագլխի պաշտօնի համար հրաւիրել Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Ի. Ֆ. Տիգրանեանին: Ինչպէս լսեցինք, պ. Տիգրանեանը հեռագրով յայտնել է իր համաձայնութիւնը:

—

Սեվաստոպօլից հեռագրում են Рус. Вѣд.-ին. Սիմֆերոպօլում, Թէոդոսիայում, Եւպատօրիայում, Ղարասու բազարում, Բախչիսարայում, Պերեկոպում ընտրված են ընտրողներ սահմանադիր-ռամկավարներից

—

Մոսկվայի Գորոդսկոյ և Մեշչանսկի մասերի ընտրողական մասնաժողովների նախագահները դիմեցին քաղաքագլխին՝ խնդրելով իրանց տրամադրութեան տակ դնել ընտրութիւնների ժամանակ զօրամասը, ի նկատի առնելով անհանգիստ ժամանակները:

—

Մոսկվայում մարտի 14-ին Մազինգի ուսումնարանի բնակարանում կ. կ. Մազինգի նախագահութեամբ կայացաւ ընտրողների ժողովը, որ գումարել էին Տվերի և Գօրօդսկոյ շրջանների ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը: Զեկուցանում էին Ն. Ժդանով և Վ. Գոլցէվ: Վիճաբանութիւններին մասնակցում էին երկու բանուորներ, որոնցից մէկը, պ. Արտամանովը, որ Մոսկվայի քաղաքային ընտրողական ժողովի անդամն էր բանուորների կողմից, շեշտեց, որ ի զուր են սօցիալ-դեմօկրատները վերագրում գլխաւոր դերը պրօլետարիատին ազատագրական շարժման մէջ: Խոստովանելով սօցիալ-դեմօկրատների արած անուրանալի ծառայութիւնները բանուորական մասսայի մէջ գիտակցութիւն զարթեցնելու գործում, ճառախօսը այն կարծիքն ունի, որ պրօլետարիատը առանց ինտելիգենցիայի և ամբողջ ազգի աջակցութեան չէր կարող աջողութիւն ունենալ իր հոկտեմբերեան գործադուլի ժամանակ: Ապա դիմելով բանուորներին, ճառախօսը շեշտում էր որ սօցիալ-դեմօկրատների ծրագրի minimum-ը ընդունում է նոյնպէս սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը. իսկ, յիշեցնելով նրանց, որ նրանց մեծ մասը գիւղացիներ են և դեռ չեն կտրել իրանց կապը հողի հետ, ուստի պէտք է տան իրանց ձայները սահմանադիր-ռամկավար կուսակցութեան թեկնածուներին, որովհետև նա է այն միակ կուսակցութիւնը, որ կարող է լուծել ագրարական ահեղ հարցը: Պատասխանելով իրան հակաճառող սօցիալ-դեմօկրատին, պ. Արտամանովը, համեմատեց սօց.-դեմօկ. կուսակցութեան խորհուրդները երկնքի կռունկներին, որոնց ի զուր աշխատում են բռնել նրանց կուսակից բանուորները:

—

Երկուշաբթի, մարտի 20-ին նշանակված հերթական քաղաքային խորհրդի նիստը չը կայացաւ քաղաքային ձայնաւորների պահանջված թւի չը լինելու պատճառով: Հաւաքված 20-21 ձայնաւորները այնուամենայնիւ մտան քաղաքային խորհրդի դահլիճը և կայացրին մի կէս ժամով մասնաւոր խորհրդակցութիւն Պետական Դումայի վերաբերեալ ընտրութիւնների մասին: Ձայնաւորներից մէկը առաջարկեց ընտրողների ցանկը առանձին տպել, բայց մտքերի փոխանակութիւնից պարզվեց, որ առանձին տպագրելու համար ժամանակ չը կայ և դա ունի այլ անյարմարութիւններ, ուստի որոշված է ընտրողների տպագրած ցանկը կախել միայն քաղաքային վարչութեան շինութեան մէջ: Մի ուրիշ ձայնաւորի յայտնութիւնից երևաց, որ Պետական Դումայի ընտրութիւններին ընդհանրապէս քաղաքային ազգաբնակութիւնը, ինչպէս մինչև այժմ փաստերը ցոյց են տալիս, շատ սառն և անտարբեր է վերաբերվում: Վերջապէս իւրաքանչիւր թաղում նախ ընտրական աշխատանքների համար այդ խորհրդակցութիւնը լուսաբանեց, որ քաղաքային վարչութիւնը պիտի հոգայ ընտրողների ժողովատեղերի համար:

—

Բաքւի նաւթահանքերի բանուորները մի պատգամաւորութիւն էին ուղարկել Պետերբուրգ միջնորդելու ֆինանսների մինիստրութեան առաջ՝ յատկացնել դրամական նպաստ յօգուտ անգործ մնացած բանուորների այն նպաստների գումարից, որը մինիստրութիւնը տալիս է նաւթարդիւնաբերողներին: Լրագիրների ասելով, այդ պատգամաւորութիւնը սկըզբում ենթարկվել է Պետերբուրգի ոստիկանութեան կողմից հալածանքի, նրանց սպառնացել են մինչև անգամ ձերբակալել, բայց վերջը այդ սուր յարաբերութիւնը փոխվել է և պատգամաւորները կարողացել են իրանց հանրագիրը ներկայացնել ուր հարկն է:

—

Աստ. Երիցեանը արդէն թոյլտուութիւն է ստացել իր պատասխանատւութեամբ հրատարակելու Թիֆլիսում. 1) մարտի 1-ից հայերէն լեզւով երկշաբաթաթերթ «Թատրոն և Գեղարուեստ» անունով. 2) ռուսերէն լեզւով «Жгутъ» երգիծաբանական երկշաբաթաթերթ, որ կը սկսի լոյս տեսնել Զատկի առաջին շաբաթվանից: Թերթի հրատարակութիւնը ճոխ ու գեղեցիկ կատարելու նպատակով վաղօրօք ջանքեր են անում գրական ու գեղարուեստական լաւ ույժեր հրաւիրելու աշխատակցութեան համար:

—

Շաբաթ, մարտի 19-ին, գիշերվայ ժամի 4-ին, որ արդէն կիրակին էր լուսանում, քաղաքիս 9-րդ մասի Թումանովսկայա կոչված փողոցի տները ենթարկվեցին անակնկալ խիստ խուզարկութեան: Այդ փողոցի տները այս կարճ ժամանակում երկու անգամ ենթարկվում են խուզարկութեան: Կարծում են, որ այդ կողմերը բանուորների բնակարաններ կան և ռումբեր են փնտրում:

—

Եկամուտի հարկի օրէնքի նախագիծը ֆինանսների մինիստրութիւնը աւարտել է և այս օրերս այդ նախագիծը քննվելու է Պետական Խորհուրդում:

—

Ինչպէս յայտնի է, բանկերը ապրանքների գրաւով փող են տալիս ցանկացողներին. հում կաշեղէնի գրաւով կաշուի գործարանատէրերը խնդիր էին յարուցել, որ պետական բանկը փող տայ. այս օրերս այդ խնդիրը վճռվել է դրական կերպով պետական բանկի խորհրդի կողմից:

—

Մարտի 20-ին, առաւօտեան ժամի 7-ին Թիֆլիսից դուրս եկած պօստի վրա, Կօջօրից մի վերստ հեռու, դէպի Մանգլիս տանող ճանապարհին, յարձակվեցին վեց հոգի զինված չարագործներ: Սպանվել է կառապանը և պօչտալիօնը, իսկ պօստը ուղեկցող պահակը վիրաւորվել է: Ինչպէս հաղորդում են պօստը անձեռնմխելի է մնացել: Աւազակներին հետամուտ են լինում պահակները: Հետքերից նկատվում է, որ աւազակներից մէկը վիրաւորված է:

—

Անդրկովկասեան երկաթուղիների ժամանակաւոր կառավարիչը կարգադրել է զինուորական հսկողութիւն նշանակել Կվիրիլի գետի վրա եղող Սվիրիի և Աջամեթի երկաթուղային կամուրջների վրա և երկու վաշտ զինուորներ էլ ուղարկել Րիօն կայարանը հսկելու:

—

Մենք ստացանք Հալլաբարի Էջմիածնեցոց սուրբ Գէորգ եկեղեցու երեցփոխի հաշիւը անցեալ 1905 թւի համար: Մուտք եղել է ընդամենը 1491 ր. 87 կ., ծախք—1478 ր. 36 կ.:

—

Ռուսաց Սինօդը հրահանգ է ուղարկել Վրաց-Իմերեթիայի սինօդական դիւանին, որ այրի քահանաների համար այժմ սահմանվում է, որ նրանք կարող են եպիսկոպոս ձեռնադրվել առանց վարդապետ ձեռնադրվելու:

—

Աղէտեալների օգտին ստացանք՝ 1) Պօլօգի կայարանից—Լևոն Խանամիրեանից 15 ր., 2) Կալարաշից—Իսրայէլ Գաղեանից 50 ր., 3) Տագանրոգից—Յարութիւն Էկմեկչեանի միջոցով հաւաքած 12 ր. 5 կ., 4) Ռոստովից—Սախառովից 2 ր., 5) Կերչից—Միհրան Պալեանի միջոցով հաւաքած 80 ր., 6) Սան-Ֆրանցիսկօյից (Կալիֆօրնիա) Գրիգոր Գուրջինեանից 58 ր., 7) Պօստ-հեռագրական մի քանի ծառայողներից հաւաքած 5 րուբլի:

—

«Էլվա» լրագիրը հաղորդում է, որ մարտի 19-ին, երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին Ելիզավետինսկի փողոցում, Թումանովի տանը գտնվող ճաշարանը մի քանի կօզակներ մտան և սկսեցին խօսել: Վերջը սրերը հանեցին և այնտեղ եղողներից փող պահանջեցին: Ժողովուրդը աղմուկ բարձրացրեց: Մի քանիսը փախան, գլուխները ազատեցին, միայն մէկը փողով ազատվեց:

—

Սամարեղի կայարանից հաղորդում են «Էլվա» լրագրին, որ այնտեղ ժանդարմները ցրվիչներից խլում են լրագիրները, պատռում և ոտի տակ ճմլում:

—

Թիֆլիսի նահանգապետը առաջարկել է Թիֆլիս քաղաքի ոստիկանապետին անյապաղ վերադարձնել իր նախորդին յանձնված, 1905 թւի յունիսի 8-ին, կարծիք յայտնելու համար, Թիֆլիսի քաղաքային վարչութեան միջնորդութիւնը դռնապաններին ոստիկանական պաշ-

---

*) Գրադ.-ընթ., որ է և քաղ. դումայի դահլիճ, գտնվում է քաղ. վարչութեան կից սենեակներից մէկում:

[1] Նրանցից մէկը նոյն իսկ սակարկութիւն արաւ ինձ հետ ռոճիկի մասին, իսկ բոլոր հոգաբարձուներն առհասարակ ո՛չ թէ միայն համաձայն էին, այլ և գտնում էին հմուտ քարտուղարի անհրաժեշտութիւնը:

[2] Ոմանք էլ ասում են թէ սպառնացել է իր հրաժարականով...

տականութիւններ կատարելուց ազատելու համար, թէկուզ առանց կարծիք յայտնելու։

—

Աչքի առաջ ունենալով պատրաստւող առաջիկայ գործադուլները, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, «Страна» թերթի ասելով, առաջարկել է պարապմունքները վերջացնել Պետերբուրգի բոլոր միջնակարգ դպրոցներում մինչև ապրիլի 27-ը. ընդունելութեան քննութիւնները, որ առաջ կատարվում էին մայիսին, նոյնպէս վճռված է կատարել ապրիլին և վերջացնել մի և նոյն ժամանակներում։

—

Յունվարի 28-ին ռեզօլիւցիայով կառավարչական սենատը որոշել է. 1) Աշխատանք տուողները պարտաւոր չեն վճարել բանւորական գործադուլի պատճառով չը բանած օրերի համար, 2) Գործադուլի կամ գործադադարների ստիպմամբ աշխատանքների դադրեցնելը չէ խախտում և ոչնչացնում վարձելու պայմանագիրը, և 3) Գործադուլից կրած վնասների համար աշխատանք տուողները իրաւունք չունենան պահանջ յայտնելու բանւորներին։

—

Քաղաքային խորհրդի առաջիկայ նիստի հերթական առաջին խնդիրն է՝ քաղաքի 1906 թ. ելքի և մուտքի նախահաշւի քննութիւնը։ Քաղաքային վարչութիւնը փետրվարի 4-ի նիստում, ֆինանսական յանձնաժողովի նախագահի մասնակցութեամբ, մուտքը որոշել է 1906 թ. համար 1,440,467 ր., ծախքը նոյնպէս այդքան, այնպէս որ նախահաշիւը առանց դեֆիցիտի է կազմած։

—

Կովկասեան ուսումնարանական շրջանի ուսումնարանների տեսուչներին և վերատեսուչներին լուսաւորութեան մինիստրութիւնը շրջաբերականով յայտնել է, որ մի քանի քաղաքային վարչութիւններ վճիռներ են կայացրել ուսումնարանական շէնքերում միտինգներ թոյլ տալ։ Այդ տեսակ միտինգներ շատ բարդութիւնների պատճառ են դառնում, ուստի շրջաբերականով պատուիրում է չը թոյլ տալ ուսումնարաններում միտինգներ սարքել և առհասարակ ժողովներ կայացնել՝ օրինական ճանապարհով կանօնադրութիւնը չը հաստատված ընկերութիւններին։

—

Լրագիրները հաղորդում են, որ նոր հարկ է դնվելու խաղաթղթերի վրա, առաջին տեսակի համար՝ ամեն մէկ կալօդին-10 կ., երկրորդ տեսակի համար—5 կոպ։

—

Բոլոր խոշոր ջրաղացատէրերը վճռել են գործերը դադարեցնել, որովհետև աղած ալիւրը արտահանելու և մի տեղից միւս տեղ ուղարկելու համար երկաթուղին վագոններ հարկաւոր չափով չունի և դրանց բազմաթիւ միջնորդութիւնները այդ խնդրի մասին մինչև այժմ մնացել են առանց հետևանքի։ Ջրաղացների գործադադարը անշուշտ պէտք է շատ թանգացնէ ալիւրի գինը մի քանի գլխաւոր տեղերում, ինչպէս օրինակ, Մոսկվայում և Պետերբուրգում։

—

Պետրոպաւլովսկի բերդը և Կրօնվերսկի զինարանը, ապագայ բարդութիւնների դէմ նախազգուշութեան միջոցներ ձեռք առնելու նպատակով, պաշտպանութեան միջոցները սաստկացնում է։ Բերդը զինում են գնդակացիրներով, ռումբերով, դաշտային թնդանօթներով և հրացաններով։ Թնդանօթները դընում են բերդի պարիսպների վրա։ Գնդակացիրները և ձեռաձիգ ռումբերը (գրանատները) կարող են պաշտպանել զինարանը։ Բերդում ստրօյէվօյ զինւորների պակասութեան պատճառով զինում են հին ձևի հրացաններով մթերանոցի թնդանօթաձիգ ոչ ստրօյէվօյ զինւորներին։ «Слово».

—

Ներքին գործերի մինիստրի անունով ամենայն օր հեռագիրներ են ստացվում նահանգապետներից, որ նահանգական քաղաքներում մեծ մասամբ Պետական Դումայի համար ընտրողներ են ընտրվում առհասարակ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան անդամները։ «Р. В.»

—

Մարտի 15-ին ներքին գործերի մինիստրը հեռագրել է լեհական թագաւորութեան բոլոր նահանգապետներին։ Այն գմինններում, որտեղ ընտրութիւնները չեն կայացել ընտրողների չը գալու պատճառով, նոր ընտրութիւններ չը նշանակել։ «Р. В.»

—

Երկուշաբթի, մարտի 20-ին Թիֆլիսի արհեստաւորաց վարչութեան դահլիճում կայացաւ արհեստաւորների նոր աւագի ընտրութիւնը։ Ներկայ էին 98 ընտրող։ Թերթիկներով առաջարկված 4 թեկնածուներից Կար. Սերոբեանցը ստացաւ 60 ձայն, Րաֆայելովը—44, Մըխէյիձէն—38 և Ռժեցկին—6 քուէարկութեան ժամանակ Րաֆայելով 2 ձայնի առաւելութեամբ վերընտրվել է արհեստաւորաց աւագի պաշտօնով։ Մի խումբ ընտրողներ ներկայացնում են բողոք՝ ընտրութիւնները անկանօն համարելով։ Ի միջի միւս պատճառաբանութիւնների՝ բողոքի հիմքը կազմում է այն նոր օրէնքով սահմանած ընտրողների թիւը չը գալով ընտրութեանը—նախագահը թոյլ է տուել ընտրութիւնները կատարել։ Այսպէս օրինակ՝ քաղաքիս 55 համքարութիւնից պէտք է ներկայ լինէին ամեն համքարից 3 մարդ, հաշվելով-165 հոգի, ընդհանուր թւի 2/3 մասը—այն է 110 մարդ, այն ինչ բողոքողները պնդում են, որ օրէնքով պահանջած թիւը չէ եղել և այնու ամենայնիւ պ. Րաֆայելովը ընտրութիւնը կատարել է ներկայութեամբ 98 ձայնի։

—

Պետերբուրգից տեղեկութիւն է ստացվել, որ համառուսական հոգևոր ժողով գումարելու համար յատկացված է 300 հազար րուբլի։

—

Պետերբուրգից հեռագրում են կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուին. «Քննութիւնները միջնակարգ դպրոցներում անմիջապէս Զատկից յետոյ սկսելու համար կարգադրութիւն չէ եղել։ Դեպարտամենտի կառավարիչ Անդրէյէվ»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այսօր, մարտի 19-ին, առաւօտեան ժամը 12-ին, տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցում կատարվեց Քրիստափոր Միքայէլեանցի հոգեհանգիստը։ Մեր Երևանն էլ չուզեց յետ մնալ և հոգեհանգիստ կատարեց միայն այն ժամանակ, երբ ամեն տեղ վերջացել էր և չը ցանկացաւ ժողովրդական այն ասածից յետ մնալ, թէ «լաւ է ուշ քան երբէք»։ Խօսեցին Մաշտոց վարդապետը և պ. Սարգիս Վարդանեանցը, դրուատելով հանգուցեալի բարեմասնութիւնները։ Հոգեհանգստին ներկայ էր միայն մի դասակարգ, մի բուռն և զգայուն դասակարգ—այդ երիտասարդութիւնն էր»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Լսում ենք որ քաղաքիս արհեստաւոր դասակարգը նախաձեռնում է ունենալու ընթերցարան և արհեստաւորական ակումբ։ Գործակատարների միութեան ընթերցարանը արհեստաւորների բարի նախանձը շարժեց և առիթ տուեց նրանց ևս հետևելու այդ բարի օրինակին»։

—

ՍՏԱՒՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Ներկայ ուսումնական տարում այստեղի վերաբացված հայոց ուսումնարանի դահլիճում սիրողները պարբերական ներկայացումներ են տալիս։ Մօտ օրերս կայացաւ հինգերորդ ներկայացումը։ Ներկայացվեց Շիրվանզադէի «Պատւի համար» պիէսը։ Բոլոր դերակատարները, իբրև սիրողներ, աջող կատարեցին իրանց դերերը։ Գեղեցիկ էին իրանց դերերում, մանաւանդ, տ. Ա. Մանուչարեան (Մարգարիտ) և պ. Ս. Բօղդանեան (Արտաշէս Օթարեան)։ Միջոցներին դարձեալ նուագում էր տղայոց գիմնազիայի նուագախումբը՝ բաղկացած ռուսներից, օսերից և լեռնաբնակ միւս մահմեդականներից։ Չը նայած, որ այս տարվայ ներկայացումներից սա ամենաաջողն էր, բայց դահլիճը լիքը չէր։ Հասարակութեան մէջ աչքի էր ընկնում մի մահմեդական երիտասարդ (ի հարկէ ոչ արտօնեալ կամ «կրթված» դասակարգից), որը, բնականաբար, իրան շատ լաւ էր զգում հայ հասարակութեան մէջ։

ՌՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարտի 20-ին, ցերեկվայ մօտ ժամը 3-ին, Սվետոպոլկ-Միրսկու փողոցով անցնող ասպ. քահանայ Նարիշոն Լ. Ինիեվի վրա յարձակվեց մի երիտասարդ բանւոր, պոկեց նրանից վզի ոսկէ խաչը և փախաւ։ Հայր ու փորձեց յետոյ գտնվեց մի տղայ, որը մատնացոյց արեց գողին։ Տղային ձերբակալեցին։ Տղան մատնացոյց արեց իր ընկերոջ վրա, որը բնակվում է Սալդատսկի բազարում։ Գողը գտնվեց և նրանից խլեցին խաչը և կտրված շղթան։ Ցանցաւորը ինչպէս պարզվեց Սղնախի բնակիչ Յովհաննէս Խեչումեանն էր, իսկ նրա մասնակիցը Սղնախի բնակիչ Ավետիսեար Թամազաշվիլին։ Ձերբակալվածները կը յանձնվին զինուորական դատարանին։

—

Մարտի 20-ին, երեկոյեան 8 և կէս ժամին Կուկիայի պրավօսլավնի գերեզմանատան մօտ ապրող գերեզմանատան քահանայ Իօսիֆ Բերիձէի բնակարանը մտան սըրբով և ատրճանակներով զինված 3 չարագործներ, խլեցին քահանայից ոսկեղէն և արծաթեղէն 300 րուբլի արժողութեամբ և մօտ 700 րուբլի կանխիկ դրամ, իսկ նոյն տեղը բնակվող քահանայ Գիօրգի Գամեզկելովից կանացի ոսկէ ժամացոյց, 80 րուբլի արժողութեամբ և 80 րուբլի փող։ Չարագործները գողութիւնից յետոյ փախան դէպի Նախալովկա։ Բերիձէ քահանան յայտնեց, որ նրանից գողացած 300 րուբլին նրա սեփականութիւնը չէ, դա գոյացած է գերեզմանատան ծախսած գերեզմանատեղերից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՄԵՐԻԿԱ

Գործադուլի սպառնալիք։ Միացեալ-Նահանգներում նոյնպէս յուզմունքի մէջ են հանքագործները։ Հանքային բանւորի դրութիւնը այնքան սարսափելի է ամբողջ բանւորական դասակարգի մէջ, որ նա չէ կարողանում, չէ կամենում գոնէ առանց բաւարար վարձատրութեան, պարարտացնել իր շահագործողներին։ Ջօն Միչել՝ Միացեալ նահանգների հանքագործների սինդիկատների միութեան նախագահը հրաւէր է ուղարկել հանքատէր ընկերութիւններին պատուիրակներ նշանակել բանակցելու բանւորական պահանջների մասին։ Եթէ կապիտալիստները չը զիջէն գործաւորներին, մենք հանդիսատես կը լինենք մի վեթխարի գործադուլի, որին պէտք է մասնակցեն 500,000 հանքագործներ։ Որպէսզի կարելի լինի մի այդպիսի հսկայական գործադուլի առաջն առնել՝ ինքը նախագահ Ռուզվելտը հարկ է համարում միջամտել հանքատէրերի մօտ։ Եթէ երբէք կապիտալիստները համաձայնութեան չը գան, երևակայում էք ինչ երկայրի սուր պէտք է դրված լինի բանւորների առաջ։ 500,000 հոգի թողնել աշխատանքը։ Բայց ո՞վ պիտի կերակրէ այդ դժբաղդներին, մանաւանդ, որ, ինչպէս հաղորդում են, գործադուլը կարող է 6 ամիս տևել, որովհետև հանքածուխի բաւական մեծ պաշար կայ։ Ահա այդ պատճառով բանւորական սինդիկատները որոշել են, որ 500000 հոգին միասին չը թողնեն աշխատանքը, այլ նրա մի մասը, որպէսզի մնացեալները իրանց տառապող եղբայրներին օգնութեան հասնեն նիւթապէս, մինչդեռ, եթէ բոլորը միասին գործադուլ յայտարարէին, աջակցութիւնը կը լինէր միայն բարոյական։ Բանւորների մի մասը վճռել է նոյն իսկ գործադուլի դէպքում, նկատի ունենալով նրա երկար տևողութիւնը թողնել Ամերիկան, ուր ապրուստը բաղդատմամբ միւս երկրների շատ թանգ է, և ապրել ժամանակաւորապէս արտասահմանում, մինչև որ գործադուլը վերջանայ։ Յոյս կայ սակայն, որ հանքատէրերը հակվէն դէպի բանակցութիւն և համաձայնութեան գան բանւորների հետ։

ԵԱՊՕՆԻԱ

Ֆօրմօզայի աղէտը.—Եապօնեան երկրաշարժների երկիրն է։ Նիպպօնը նոյնքան սովոր է բնական այդ աղէտներին, որքան Արևելքի միւս երկրացիները արհեստական աղէտներին, օրինակ ռուսաստանցին այս [illegible] Վիտտէ-Դուրնովեան բռնութիւններին։ Բայց մինչդեռ մենք՝ յոյս ունենք մի օր ազատվել վիտտէական աղէտքից, դժբաղդ եապօնացիները անվերջ դատապարտված են երկրաշարժի սարսափներին։ Եապօնիական կղզիները համարեա շարունակ ցնցումների մէջ են բայց այն երկրաշարժը, որ տեղի ունեցաւ վերջերս Ֆօրմօզայում, ամենաուժեղներից մէկն է, որ տեսած լինի եապօնացին։ Զոհերի թիւը հասնում է 7000 հոգու, սպանված և վիրաւորված։ Շարժերը ընդհատ շարունակվում էին։ Ցնցումը այնքան զօրեղ էր, որ կղզում մի տեղ երկիրը ճեղքվեց սարսափելի չափերով. 1600 մետր երկարութեամբ և 330 մետր լայնութեամբ։ Սովից յետոյ Եապօնիայի հարուածող մեծագոյն աղէտն է սա։

ԱՆԳԼԻԱ

Բանւորական պատգամաւորները։ Համայնքի պալատի բանւորական պատգամաւորների մասին, որոնցից ամենից աւելի երկիւղ էին կրում ունիօնիստները, կօնսերվատիվ «Standard»-ը հետևեալ կարծիքն է յայտնում. «Բանւորները հետզհետէ աւելի ու աւելի են հեղինակութիւն վաստակում պալատի միւս կուսակցութիւնների մէջ, որպէս գործնական, հանգիստ և խոհուն մարդիկ, և ադմինիստրատիւ մեծ ընդունակութիւններ ունեցողներ։ Նրանք քաղաքավարի են և համեստ, միշտ պատրաստ են տալու հարկաւոր բոլոր տեղեկութիւնները իրանց քաղաքական նպատակների մասին և մի և նոյն ժամանակ իրանց մասին ռեկլամ անելու ձգտումներից։ Կասկած չը կայ, որ բանւոր պատգամաւորները ստորին պալատի համար ամեն կողմից մեծ գիւտ են հանդիսանում»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի։ Պետական Խորհրդի համար ընտրված են Կալուժսկի նահանգի ազնուականների կողմից նահանգական պարագլուխ Բուլիչեվը և նախկին պարագլուխ Եանօվսկին։ Կիեվի համալսարանից՝ ռեկտոր Ցիտօվիչը, որ պատկանում է հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան և պրօֆէսոր Արմաշևսկին։ Դումայի համար որպէս ընտրողներ Օրգեէվում—հողատէրերից մի քահանայ, 2 զէմստվային պետեր, 6 ազնուական, 4 ազատամիտներ և 1 կադետ, մնացածները պահպանողականներ են։ Չէրկասում՝ 99 գիւղացի, 4 քահանայ և 2 հողատէրեր. Սարանսկում՝ ազնուականութեան պարագլուխը, զէմստվային կառավարիչը և մի քահանայ—բոլորն էլ անկախ պահպանողականներ և այլն։

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ, 19 մարտի։ Բէյնակեան դպրոցի վերատեսուչ Կոնտրատովիչը պաշտօնից արձակված է։

ՀԱՆՕՎԵՐ, 19 մարտի։ Մետաղագործական գործարանների 12,000 բանւորներ գործադուլ արին։

ՀԱՄԲՈՒՐԳ, 19 մարտի։ Համբուրգեան նաւաստիների դաշնակցութիւնը, որ բաղկացած է մօտ 2000 մարդուց, վճռեց վաղը առաւօտեանից գործադուլ անել։ Վաղը երեկոյեան կայանալու է նաւահանգիստների բոլոր բանւորների միացեալ ժողովը։

ԻՆԴԻԱՆՕՊՕԼ, 19 մարտի։ Բանւորների դաշնակցութեան կենտրոնական կոմիտէի պատուիրագրութեամբ, որ պահանջում է աշխատանքները դադարեցնել մինչև բանւորների և լեռնահանքատէրերի մէջ եղած վէճերի հարցերի վճռելը,—գործադուլ արին մօտ 1/2 միլիօն լեռնահանքային բանւորներ։ Ենթադրում են, թէ շաբաթվայ վերջը մօտ 100,000 բանւոր կը վերսկսեն աշխատանքները այն րայօններում, ուր մի քանի լեռնահանքատէրեր պատրաստ են ընդունել 1903 թ. աշխատավարձի աղիւսակի հիմունքների վրա դրած պայմանները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի։ Լրագիրների ասելով, հրապարակախօս Աննէնսկին բերդից ազատ է ուղարկված։ Մարտի 19-ին երեկոյեան յաքունիս է գրաւած «Русь» լրագրի առաւօտեան համարը։

ՍԷՆ-ԷՏԻԷՆ, 19 մարտի։ Լեռնահանքային բանւորների դաշնակցութեան ժողովը պատուիրել է իր պատգամաւորներին՝ պահանջել օրավարձը աւելացնել երկու ֆրանկով, 25 տարի ծառայելուց յետոյ նշանակել թոշակ, 8 ժամվայ բանւորական օր, և մրցանակը վերացնել։ Վճռված է մարտի 23-ին աշխատանքները դադարեցնել, եթէ լեռնահանքատէրերը բոլոր պահանջներին բաւարարութիւն չեն տալ։

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ, 19 մարտի։ Գեներալ-նահանգապետի հրամանով լոյս տեսաւ «Пятигорскій Листокъ» լրագիրը նախկին ծաւալով և Կիբարտովի խմբագրութեամբ։

21 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի։ «Русск. Госуд.» լրագրի ասելով պօստ-հեռագրական վարչութիւնը մտադիր է Պետական Դուման մտցնել երկու նախագծեր. պաշտօնեաների դրութիւնը բարելաւելու և $2\frac{1}{2}$ միլ. յատկացնել՝ ծառայողների կազմը ուժեղացնելու և իւրաքանչիւր 5 տարուց յետոյ ռոճիկները աստիճանաբար աւելացնելու համար, ինչպէս և 2 միլիօն՝ ստորին ծառայողների դրութիւնը բարւոքելու համար։ Այսօր մայրաքաղաքի փողոցներում կենդանութիւն է տիրում ընտրութիւնների պատճառով։ Ամեն ուղղութեամբ արշաւում են ընտրողների կառքերը, մանր խմբերով անցնում են ընտրողները, ունենալով իրանց ձեռքում սպիտակ ծրարներ։ Շատ խանութներ փակված են, առաւօտվանից կառավարչական, հասարակական և դասակարգային հաստատութիւնների դիւաններում դատարկութիւն է տիրում, որովհետև ծառայողների ընդհանուր թւի 66%-ը օգտվում է ընտրողական իրաւունքով։

ՄՕՍԿՎԱ, 20 մարտի։ Մոսկվա քաղաքի բանւորներ ընտրողների նախընտրական ժողովում պրիստաւի անակնկալ երևալու պատճառով ընտրողները յայտնեցին, որ անկարող են քննել իրանց կարիքները ոստիկանութեան ներկայութեամբ և արձանագրութիւն կազմեցին, թէ ժողովը յետաձգվում է։ Քաղաքապետը արգելել է տպագրական գործի բանւորների դաշնակցութեան ժողովը և տօնական հանգստի մասին խորհելու ժողովված նիստը։

ՍՈՒՄԻ, 20 մարտի։ Առաւօտեան երևան է հանված փոխադարձ վարկի ընկերութեան պայթեցնելու գործը։ Ռումբը դրված է եղել նախասենեակի վառարանի մէջ։ Շվէյցարը նկատել է մնացող պատրոյգը։ Չարագործը անյայտացել է։

ԲԵՐԴԻՉԵՎ, 20 մարտի։ Երևաց, որ կապալառու Շապիրօի կողոպտման գլխաւոր առաջնորդներն են եղել տեղական առաջին կարգի վաճառական Շպիլբերգի որդիքը։

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ, 20 մարտի։ Գիշերով պանսիօնից վերադառնալու ժամանակ բէյնակեան դպրոցի տեսչի երեսին անյայտ չարագործների ձեռքով ծծմբային թթւուտ է ցրկված. բարեբախտաբար աչքերը անվնաս են մնացել։

ԼԱՆՍ, 20 մարտի։ Աւիոնում անցեալ գիշեր Պարօնի տան մէջ դինամիտային պայթում են առաջացրել։ Զոհեր չը կան, միայն եղել են նիւթական վնասներ։ Ֆուկիէրում և Աւիոնում գործադուլ անողները բարիկադներ կառուցին, սակայն որոնց հեծեալ մի զօրաբաժին ամբաստանողութեան ենթարկեց. վիրաւորված է մի բանւոր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի։ Ի նկատի ունենալով, որ մօտենում են Զատկական տօները, ներքին գործերի մինիստրութիւնը նահանգապետներին, քաղաքապետներին և գլխաւոր ոստիկանապետներին ուղղած գրութեամբ յիշեցնում է, որ հրէական ջարդերի առաջն առնելու և ճնշելու վերաբերմամբ վերջերս ուղարկված հինգ հրահանգները անկիրագործելու դէպքում, պատասխանատուութեան կենթարկվեն հէնց իրանք անձնականապէս։ Տեղական վարչութիւնը մի հրահանգով պատուիրել է բոլոր դէպքերի մասին անյապաղ տեղեկացնել Պետերբուրգ, և չը խանգարել ու ընդդիմադրել բնակիչներին՝ անմիջապէս դիմել իրանց տեղեկութիւններով և բողոքագրերով Պետերբուրգ։ Այդ հեռագիրների մասին անմիջապէս մինիստրութեան զեկուցանելու համար—նշանակված են երեք պաշտօնեաներ, որոնք պէտք է հերթապահեն օր ու գիշեր։ Մամուլի գործերի գլխաւոր վարչութիւնը հաղորդագրեց ծայրագաւառների կենտրոնական գրաքննիչ կոմիտէներին և առանձին գրաքննիչներին, որ մամուլի վերաբերեալ եղած ժամանակաւոր կանօնների հիման վրա—գրքերի և բրօշիւրների, որոնց իր ժամանակին թոյլատրել է գրաքննիչը, հրատարակիչներին և հեղինակներին պատասխանատուութեան ենթարկելը անթոյլատրելի է։ Պետերբուրգում, Մոսկվայում և Օդեսսայում գրաքննիչի թոյլատրած բրօշիւրների և թերթիկների յարքունիս գրաւելը, եղել է վարչութեան կամ քննիչ իշխանութեան հրամանով, և որ գլխաւոր վարչութիւնը այդպիսի դէպքերի վերաբերմամբ ոչ մի քայլ չի անի, մինչև որ այդ հարցի առթիւ դատաստանական պալատները և ապա Սենատը իրանց կարծիքները չը յայտնեն։ Լրագիրների գործակալութեան բաժանմունքներում եղած կէս միլիօնի իւրացման մասին տարածած լուրերը սուտ են։ Մարտի 23-ին Պետական Խորհրդում քննվելու են 1) 1905 թ. հոկտ. 2-ի ուկազի որոշումները ծովային և գետային շոգենաւագնացութեան ձեռնարկութիւնների վրա տարածելու, 2) կանօնների նախագծի համաձայն գիւղատնտեսական բանւորների մէջ ծագած համախմբումների առաջն առնելու և 3) Սախալին կղզին յանցաւորներ այսուհետ չուղարկելու մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի։ Ընտրութիւնները բոլորովին հանգիստ և աջող անցան, գերազանցելով ամեն սպասվածներից։ Մօտաւոր հաշւով ընտրութիւններին մասնակցել է 148,194 քաղաքային ընտրողների 60%-ից աւելին։ 1905 թ. գարնանային կիսամեակի վճարից ուսանողներին ազատելու պատճառով համալսարաններում գոյացած դեֆիցիտը ծածկելու նպատակով—լրացուցիչ կերպով կանանց բարձր դպրոցներին յատկացված է 288,000 րուբլի, մինչդեռ մասնաւոր դպրոցներին մերժված է նպաստել։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը խնդրամատոյց է եղել բանալու Մոսկվայի կանանց բարձր կուրսերին կից նաև բժշկական բաժին, որ պէտք է համապատասխանէ համալսարանների բժշկական ֆակուլտէտներին։ Այդ բաժնում սովորողները կօգտվէին կուրսերի վերաբերեալ գոյութիւն ունեցող կանօններից օրէնսդրական կարգով։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրին իրաւունք է տրված համալսարան ընդունել միջնակարգ դպրոցներ աւարտողներին առանց հին լեզուների քննութեան,—բացի լատինական լեզուից, եթէ ծրագիրը մնացած բաներում համապատասխանում է գիմնազիայի ծրագրին. հակառակ դէպքում միջնակարգ դպրոցներ աւարտածները քննութիւն են տալու նաև մնացած այն առարկաներից, որոնք մտնում են գիմնազիայի ծրագրի մէջ։ Ընտրութիւնների պատճառով այսօր նշանակած Պետական Խորհրդի նիստը յետաձգված է վաղվան։ Մինիստրների նախագահի անունով Չէրնիգովի նահանգական կառավարչից ստացված է հետևեալ հեռագիրը. «Կլինցայում ձեռք առած միջոցների շնորհիւ հրէայ ազգաբնակութեան ծայրահեղ երկիւղը ցրված է»։

ՊԵՏԵՐՄԱՐՑԲՈՒՐԳ, 20 մարտի։ Ոստիկանական տեսչին սպանող բոլոր 12 տեղացիներին հրացանազարկ արին։

ԼՕՆԴՕՆ, 20 մարտի։ Ալժէզիրասի կօնֆերենցիայի առիթով «Թայմսը» ասում է. «Ֆրանսիան և Ռուսաստանը մնացին որպէս հաւատարիմ դաշնակիցներ։ Անգլիացիները յոյս ունեն, որ կօնֆերենցիան կամրապնդէ Լօնդօնի և Փարիզի քաղաքականութիւնը, որ կայանում է ֆրանս-ռուսական դաշնագրութիւնը և անգլօ-ֆրանսիական համաձայնութիւնը՝ Անգլիայի և Ռուսաստանի սրտագին մերձեցման միջոցով լրացնելու մէջ»։ «Թայմսը» ասում է, որ ռուսաց փոխառութիւնը Լօնդօնում կը հանդիպէ բարեյաջող ընդունելութեան, որովհետև Ռուսաստանի քաղաքական անտագօնիզմը վերջին ժամանակներս թուլացել է։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Յ. Մ. [illegible]—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԻԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՀԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՈԿ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. [illegible]
[illegible]
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գ
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գ
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցե
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Ազօվ-Դօնեան Առևտրական բանկի Թիֆլիսի բաժանմունքը

յայտնում է ի գիտութիւն իր փոխառուների, որ եթէ նրանք արտօնեալ շաբաթվայ ընթացքում չը մտցնեն բանկին հասանելիք այն վճարները, որոնք վերաբերում են իրանց յատուկ հաշիւներին և փոխատուութիւններին, ի նկատի ունենալով տոկոսաբեր թղթերի կուրսի ընկնելը և իր ժամանակին տոկոսների չը վճարելը, ուստի նրանց տոկոսաբեր թղթերը կը ծախվեն բօրսային մակլերի միջոցով Պետերբուրգի բօրսայում՝ բանկի կանօնադրութեան 21-ի հիման վրա։ (ա. օ.) 2—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

27 ին մարտի (9-ին ապրիլի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, «Douro» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քանէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանգհայ (Չինաստանում), Հեռաւոր Արևելքում գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում կրճնակի պակասեցրած գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում, թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ (Հ.) 1—1

100% ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ

Առևտուրի կանգ առնելու պատճառով մենք վճռեցինք նախատօնական էժան վաճառում նշանակել։

Կարևոր է նաև վաճառականների համար գրպանի սև պողպատէ ժամացոյցներ տղամարդ[կանց] կամ կանացի, բաց «Ռեմօնտուար» 36 ժամվայ ընթացքում 1 անգամ քոքելու

I-ին տեսակի	2	50
Նոյն տեսակ, խուլ	3	25
Տղամարդու ժամացոյց նոր ոսկուց, բաց.	2	75
Նոյն տեսակի, խուլ	3	75
Տղամարդու ժամացոյց ամերիկական ոսկուց, I-ին տեսակի	5	50
Նոյն տեսակի, Անկերնի «Դիանա» I-ին տեսակի	7	»
Սև, բաց ժամացոյց «Ռօսկօպֆ»	2	75
Սև ժամացոյց մշտական օրացոյցով	7	50
Սև զարթուցիչ ժամացոյց	7	50
Սև ժամացոյց օրը 1 անգամ քոքելու, բաց	7	50
Նոյն տեսակ, խուլ » » »	9	»
Սև ժամացոյց «Ռօսկօպֆ», «Ավտօմատ»	3	75
Արծաթէ ժամացոյց 84 պր. խուլ, բանալիքով քոքելու	7	»
Նոյն տեսակի 1 9քարով	7	50
Նոյն տեսակի 23 քարով	8	50
Արծաթէ ժամացոյց, խուլ, բանալիքով քոքելու, 80 պր., կամ 1/4 ֆ., 22	10	30
Նոյն տեսակ, առանց բանալիքի քոքելու	11	50
Ժամացոյց արծաթէ, կանացի խուլ «Ռէմօնտուար	6	»
Նոյն տեսակ, տղամարդու, խուլ, գները 8, 9, 10, 11 մինչև	15	»
Ժամացոյց արծաթէ, բաց, ռեմօնտ. 8 օրը 1 անգամ քոքելու	9	»
Նոյն տեսակ, խուլ	11	50
Ժամացոյցներ ոսկէ, տղամարդի, խուլ «Ռեմօնտուար», գները 45, 55, 70, մինչև	100	»
Նոյն տեսակ, կանացի 20, 24, 30, մինչև	70	»
Ժամացոյցի շղթայ ամերիկական ոսկուց կամ նիկելից	»	35
Զանգուլակ բրէլօկ արծաթէ	»	25
Կողմնացոյց մետաղէ	»	20
Կաշվէ քսակ, կնիքով	»	75
Գրպանի դանակ	»	35
Ոսկէ մատանի 56 պր.	»	75
Մի զոյգ 56 պր. ոսկու օղեր, քարերով	»	80
Պատկերագիրք 20 տեսակ պատկերներով.	»	75

Ամեն մի ժամացոյց նախ քան ուղարկելը ուշադրութեամբ ստուգվում է և տրվում է 4 տարով երաշխաւորութիւն։
Պատուէրները կատարվում են շուտով վերադիր վճարով. գրավական չէ պահանջվում։
3 րուբլուց պակաս պատուէրները չեն կատարվում։
Խնդրում ենք վերաբերվել լիակատար հաւատարմութեամբ, որովհետև ուղարկում ենք բացառապէս ընտիր ապրանքներ։
Չը հաւանած ապրանքները յետ ենք ստանում։
Պահանջները խնդրում են ուղղել Экспортному Дому Г. Вузееру, Варшава, Грибная площадь, № 6-6.
P. S. Խնդրում ենք շտապել պատուէրներով, որովհետև առևտուրը նշանակված է կարճ ժամանակով։
Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։

Բ Ժ Ի Շ Կ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն՝ անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2, (ա. օ.) 113—300

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կորգանօվսկայա փող. № 20 Վերայում, Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 94—150

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Ռախչէևսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլէֆօն № 11. (ա. օ.) 3—20

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։ (ա. օ.) 56—100

ՄԵԾ ԱՅԳԻ
4½ ԴԵՍԵԱՏԻՆ
Վերայում, մօլօկանների աւանի մօտ ԾԱԽՎՈՒՄ է։ Հարցնել Սօլօլակ, Գանօվսկի փողոց, № 22, շվէյցարին։ 1—3

Դասաւանդութեան մէջ
ՓՈՐՁՎԱԾ
մի երիտասարդ ընդունում է թէ իր և թէ ցանկացող հայ ընտանիքներում հայոց լեզուի դասեր տալ, իսկ երեխաներին բացի դասից բարոյակրթական պարապմունքներ, նոյնպէս սովորեցնում է հասակաւոր անգրագէտներին հայերէն. Նոյնը որոնում է հայ գրասենեակներում գրագրի պաշտօն։ Դիմել «Մշակի» խմբագրատուն։ 1—5

Լոյս տեսաւ
ԳԻՒԼԻՍՏԱՆՑԻ
ՄԿԱ ՎԱՅ ՋՈՒՆԻՄ
Պատկեր հայ գաղթականների կեանքից։
Գինն է 12 կոպ.
ճանապարհածախքով 15 կոպ. վաճառքի ամբողջ արդիւնքը յատկացվում է հայ արկածեալների օգտին։
Դիմել՝ Карсъ. Аствацатуръ Бекъ-Овсепян 2—3

Վաճառվում են
ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ
1) Հայոց Հայրապետութիւնը տիպ. Մոսկվայի 15 գոյնով գինն է . . . 50 կ.
2) Վարդանանց պատերազմը ֆօտոտիպ 50 »
3) Հոգի Հայաստանի ֆօտոտիպ . . 50 »
Հասցէն Тифлисъ Головинскій проспектъ книжный магазинъ Пушкина.
Կատարում ենք ընթերցանութեան, դասագրքերի և օրացոյցների պատուէրներ. պահանջի հետ ուղարկել փողի 1/3 մասը, մնացորդը վերադիր։ Գումարով պահանջողներին րուբլուն 20 զեղչ ճանապարհածախսով։
Գրավաճառանոցը ընդունում է կօմիսիայով գրքեր։ (Շ. Հ.) 2—2

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» ԳՐԱԽԱՆՈՒԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
Լոյս տեսաւ
ՓՈՒՉ ՋԱՆԱԿ
Դրամա հինգ գործողութեամբ
Գեորգ Ղարաջեանի
Դիմել՝ Թիֆլիս, գրախանութ «Գուտտենբերգ»
Գինն է 50 կոպէկ 2—3

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15